

3308

Політесу - 4 рт

Р-м + рт<sub>2</sub>

1925

ЗКМ

№-43

R 20011

2010

5971



ՈՒՂԵՑՈՅՑ-ԱՐԻ



ՆՈՐԸՆԾԱՆԵՐՈՒ, Բ. ԿՈՐԳԻ ՍԿՈՒՏՆԵ-  
ՐՈՒ ԵՒ Ա. ԿՈՐԳԻ ՍԿՈՒՏՆԵՐՈՒ  
ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀՍԾԱՐ

Կազմուած Հ. Մ. Բ. Մ. ի

Ռուժանիոյ Շրջանային Վարչութեան  
նախաձեռնութեամբ



33007  
Ու-43



# Ո Ւ Ղ Ե Յ Ո Յ Յ - Ա Ր Ի



Նորընծաներու, Բ. կարգի սկսուսներու  
և Ա. կարգի սկսուսներու պատրաստութեան համար

---

Կազմուած Հ. Մ. Բ. Մ. Ի  
Ռուսահայ Երջանային Վարչութեան  
Նախաձեռնութեամբ

5971



Ս Կ Ա Ո Ւ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը  
Ի Ն Ձ Պ Է Ս Շ Ի Մ Ն Ո Ւ Ե Ց Ա Ի

ԱՌԱԳ ՊԵՏԸ ԻՆՔԸ ԿԸ ՊԱՏՄԷ

ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

1893—94 տարիներու ընթացքին, այն միջոցին երբ Հուսարներու 13րդ խումբին մէջ կը ծառայէի, խելամուտ եղայ որ պատերազմող զինուորները պէտք եղածին չափ զործնական կերպով մարզուած չէին սովորաբար՝ խաղաղութեան ատեն: Հետեաբար որոշեցի իմ գունդիս համար անհատական հրահանգումի դասընթացքներ կազմակերպել՝ թէ հետազօտիչ և թէ պատերազմող զինուորներու համար:

1897—98ին անձնապահ Վիշապախումբերու 5րդ գունդին հրահանատարութիւնը ստանձնած ըլլալով, նմանօրինակ հրահանգում մը առաջ տարի — բայց աւելի աղէկ ուսումնասիրուած յատակագիծի մը համաձայն — զինուորներու թէ նկարագիրը (այսինքն առնականութիւնը, անձնալստանութիւնը, վստահելիութիւնը) կազմելու և թէ անոնց զինուորական կարողութիւնները զարգացնելու կրկին նպատակով, նկատելով որ անոնք, զպրոցէն ելած ատեն, մեծ մասամբ զուրկ էին այս բարեմասնութիւններէն:

Իմ այդ դասախօսութիւններս և հրահանգներս ամփոփուած են “Aids to Scouting”, անուսով զբքօյկի մը մէջ:

ՊՈՒՔՐԷՇ

Տպ. “Cartea Romaneasca,, S. A.  
1925



93154-442

1239-2002



Հարաւային Ափրիկէի պատերազմին միջոցին (1899—1900) սպայակոյտի պետս, Major Lord Edward Cecil, Mafekingի երիտասարդներուն մէջէն կազմեց խումբ մը, որ կազմակերպուած էր աւելի սկստութեան քան զինուորական պատրաստութեան հիման վրայ: Փորձը կատարեալ յաջողութեամբ պսակեցաւ:

Այս փորձը սպացուցուց նախ թէ երիտասարդները շատ շուտ կը սորվին, երբ իրենց հաճելի հրահանգումի մը ենթարկուած ըլլան, և յետոյ, թէ անոնք կարծուածէն շատ աւելի կարող են պատասխանատուութիւն մը ստանձնելու. բաւական է որ վստահութիւն ցոյց տրուի իրենց հանդէպ: Խումբը սակաւաթիւ երիտասարդներէ կը բաղկանար, որպէսզի պետը կարող ըլլար գիտակցօրէն զբաղելու իւրաքանչիւր սկստւածով զատ զատ՝ խմբակներու ղրութիւնը հաստատուեցաւ, — վեց սկստու մէկ պետի առաջնորդութեամբ: Երբ Հարաւային Ափրիկէի ոստիկանական մարմնոյն կազմակերպութեամբ զբաղեցայ, նոյն մէթոտը կիրարկեցի աւելի մեծ չափով:

Ուստի երիտասարդ ենթասպաններուն վրայ դրուեցաւ պատասխանատուութեան բաժին մը, և խմբակներուն միջեւ ստեղծուած մրցումը առաջ բերաւ յաւազոյն ոգի մը և բարձրացուց կարողութեանց ընդհանուր մակարդակը: Երիտասարդներուն մարդկային զգացումներուն կոչում եղաւ և անոնց յանձնուեցան պաշտօններ որոնք կ'ապացուցանեն թէ ինչ մեծ վստահութիւն ցոյց կը տրուէր իրենց պատւախնդրութեան մասին: Իրենց համազգեստը կը բաղկանար կովարձի (cow boy) գլխարկէ մը, չափիկէ մը, կանաչ փողկապէ մը և կարճ տափառէ մը: Պատուանշաններով կը քաջակերուէին անոնք որոնք յառաջ-

դիմութիւններ կ'ընէին ծրագրին այս կամ այն մասին մէջ:

1907ին սկստւածներու հրահանգումին համար բանակումի մը փորձը ըրի Պրատենսի կղզիին մէջ: Փորձը կատարուեցաւ ամէն դասակարգէ երիտասարդներու վրայ. արդիւնքը ակնկալութիւններս գերազանցեց, ուստի որոշեցի գաղափարս առաջ տանիլ:

Այս հրահանգումը հիմնուած էր նոյն այն հրահանգումին վրայ զոր կիրարկած էի զինուորներուն և ոստիկաններուն համար, ինչ ինչ պատշաճ փոփոխութիւններով՝ հրահանգումը մատչելի ընելու համար երիտասարդներուն: Զուլուներուն եւ ափրիկեան ուրիշ ցեղերու կողմանէ որդեգրուած սկզբունքները որդեգրեցի, սկզբունքներ որոնք կը ցոյցանէին մէկ քանիները Եպիկտետի գաղափարներուն եւ այն մէթոտներուն զորս ի գործ կը դնէին Սպարտացիները և հին Անգլիացիները և Իրլանտացիները՝ իրենց գաւակները կրթելու համար: Ինձի առաջնորդ ունեցայ նաև ճարտնացիներուն Bushidoն, ինչպէս նաև աւելի նորերու մէջէն John Poundsի մէթոտը՝ տղայոց դաստիարակութեան համար, Jahnի մէթոտը՝ ֆիզիքական մշակոյթի համար, առանց մոռնալու այն մէթոտները՝ որոնք ներկայիս ի գործ կը դրուին Sir William Smithի, Seton—Thompsonի, Dan Beardի և ուրիշներու կողմանէ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՅԼԸ

1908ի յունուարին հրատարակեցի Հրահանգումի Դասագիրքս վեց մասերէ բաղկացած եւ “Scouting for boys,” կոչուած: Դասագիրքը դեռ ամբողջովին չհրա-



տարակուսած, Միացեալ թագաւորութեան զանազան մասերուն մէջ բազմաթիւ խումբեր կազմուեցան:

Այնպէս կարծած էի թէ սկաուտութիւնը յաւելուածական հրապոյր մը պիտի ըլլար միայն Boys Brigadsի և Church և Lads Brigad երիտասարդներուն համար, բայց որովհետեւ, առանց այս մարմիններէն մէկուն պատկանելու, շատ մը երիտասարդներ կը մասնակցէին սկաուտական շարժումին, յայտնի եղաւ որ ուրոյն կազմակերպութիւն մը կարեւոր կը դառնար:

1910ին, սկաուտական շարժումը այնպիսի զարգացում մը ստացած էր (123,930 սկաուտ) որ անհրաժեշտ նկատեցի բանակէն հրաժարիլ սկաուտական ձեռնարկին վարչութիւնը ձեռք առնելու համար:

Ձեռնարկը երիտասարդներուն հաճելի ընծայելու և արկածախնդրական իրենց ձաշակին գոհացում տալու համար, իբր իտէալ անոնց առաջարկեցի արւեհաստով որսորդներու, թափառաչրջիկ ասպետներու և երկրախոյզերու գործունէութիւնը: Այս դիւցաղները զորս իրենց ցոյց տուի իբր հետեւելի օրինակներ, սկաուտ (scout) անունով յորջորջեցի:

Վրանաբնակ եւ նաւու մէջ կեանքը, երկրախոյզի գիտութիւնը եւ բնութեան ուսումնասիրութիւնը երիտասարդներուն համար հրապուրիչ բաներ պիտի ըլլային եւ միևնոյն ատեն ուսման եւ դաստիարակութեան միջոցներ:

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

ՄեթոճԸ.— Հրահանգումը այնպիսի ձեւ մը չունէր որ երիտասարդը կրաւորապէս ընդունի գիտելիքը, հապա այնպիսի ձեւ մը ըստ որում երիտասարդը անձնական գործունէութիւն մը ունենայ:

ԾՐԱԳԻՐԸ.— Մասամբ իմ անձնական փորձառութեան, մասամբ ալ ուրիշներու փորձառութեան վրայ հիմնուելով, փափաքեցայ լեցնել այն թերիները որոնք կը դառնուին դպրոցներէն մեծ մասին կրթական դրութեան մէջ:

- 1. Նկարագրին եւ իմացականութեան մշակումը առհասարակ:
- 2. Ձեռական ճարտարութիւն.
- 3. Ֆիզիքական զարգացումը եւ առողջապահութեան գիտութիւնը:
- 4. Ուրիշներու եւ պետութեան հանդէպ պարտականութիւններ:

Հետեւաբար սկաուտական աշխատութիւնները և հրահանգները այնպէս մը կազմակերպուեցան որ անձնական գործունէութիւնները զարգանան ըստ թիւ 1, 2, 3 կէտերուն եւ յետոյ անհատականութիւնը համայնքին իսպաս դրուի եւ կամ, ուրիշ բառերով, քաղաքացիական ոգին զարգանայ:



ԻՏԷԱԼ.— Իբր բարձրագոյն խտեայ՝ պատիւը առաջարկուեցաւ երիտասարդներուն: Սկսուտական օրէնքը, որ հիմն է ամբողջ ձեռնարկին, ասպետութեան օրինագիրքէն առնուեցաւ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ.— Կարելի եղածին չափ ապակեղրոնացուեցաւ, որովհետեւ տեսած էի որ շատ մը ուրիշ ձեռնարկներ կազմալուծուած էին՝ ծայրահեղ կեղրոնացումի մը պատճառաւ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ.— Որպէսզի խմբապետը անձնապէս կարենայ ձանձնալ իր սկսուտներուն ամէն մէկը և այսպէսով նախանձախնդիր ըլլայ իւրաքանչիւրին նկարագիրը զարգացնելու, յանձնարարուեցաւ սակաւաթիւ սկսուտներէ բազկացած խումբեր կազմել: Կը կարծենք թէ 40ը առաւելագոյն թիւն է:

Խմբակներու դրութիւնը որդեգրուեցաւ, ինչպէս ոստիկանական մարմնոյն մէջ, և նոյն պատճառներով: «Պէճ»երու ընդարձակ դրութիւն մը հաստատուեցաւ, ինչպէս ծովային զինուորներուն և ոստիկանական մարմնոյն մէջ, ծրագրին այս կամ այն մասին մէջ ցոյց տրուած գերազանցութեան ի նշան:

ՆՊՍՍԱԿ.— Ձեռնարկին նպատակը աղէկ քաղաքացիներ հասցնել ըլլալով, զինուորական պատրաստութիւնը աւելորդ համարուեցաւ:

Սկսուտական գիտութեան միջոցաւ, ամէնէն անգղայ սինքլորն անգամ կրնայ ազնուանալ և դարձի վայ: Սկսուտական օրէնքը, որուն լրացուցիչ մասը կը կազմէ ամէն օր բարի գործ մը կատարելու

պարտականութիւնը, կերպով մը հիմն է մեր վարքին՝ հանդէպ Աստուծոյ և մեր նմանին, հիմ որուն վրայ կրնայ դիւրաւ ձեւուիլ ունէ կրօնական հաւատալիք:

Չեմ կարծեր որ այս արդիւնքը կարենայ ձեռք բերուիլ պարզ բանաձևի մը միջոցաւ: Արդէն ձեռնարկին զազանիքը, հուսկ հետևութեամբ, եղբայրակցութեան ոգիին մէջ է:

«Կրնաք մանչու մը օտ օտ յի, զինուորի կամ նաւաղի մը հագուստ հագցնել, կրնաք զայն մարդել այնչափ որ պատկերի մէջ երեւցածին չափ շիք երեւայ, — ասիէ անպատճառ չի հետեւի որքերը վրայի մասը քերթէք, իրաւցընէ զիւցազն կամ սուրբ մը ըլլայ»:

Արդիւնքը ներքին ոգիէն և ոչ թէ արտաքին խաւէն կախում ունի: Արդ այդ ոգին կայ ամէն տղու մէջ խնդիրը զտնելուն և երևան բերելուն վրայ է:

Մեր կարգապահական միջոցն է այն խոստումը զոր սկսուտը կ'ընէ իր պատուոյն վրայ, կարողութեանը ներած չափով յարգելու սկսուտի օրէնքը, և որ 100ին 99 պարագաներու մէջ ընտիր արդիւնք կու տայ:

ՇԱՐԺՄԱՆ ԾԱԽԱԼՈՒՄԸ

Սկսուտական շարժումը ստեղծելէն աւելի շուտ ծաւալուեցաւ: Միացեալ թագաւորութեան մէջ ամէն տեղ այ մտաւ: Հայրենասէրներէ ոմանք իրենց հայրենիքին բարօրութեան և բարգաւաճման նախանձախնդիր կ'ըսէին թէ արդեօք կարելի չէ՞ բացառն



դի ենթարկել սկառուտութիւնը, որպէսզի մրցակից ազգ մը զայն չյախշտակէ: — Հոգ մի ընէք, կը պատասխանուէր անոնց, սկառուտութիւնը զուտ անգլիական զրոշմ կը կրէ եւ այս պատճառաւ հաճելի չի կրնար ըլլալ օտարականներուն:

Միտլ: Ամբողջ աշխարհի մէջ մարդուող 750,000 սկառուտներէն հազիւ 250,000ը Անգլիացի են: Եւ ինչ որ հետաքրքարժ է՝ սա է թէ սկառուտութիւնը ինքնիրենը տարածուեցաւ:

Էտուարդ Թագաւորը առաջիններէն եղաւ հասկցող թէ այս հետաքրքարժ ձեռնարկէն կարելի էր օգուտ քաղել: Իր մահէն երկու օր առաջ կը պատրաստուէր սկառուտները աչքէ անցընելու: Ծօրծ Թագաւորը մէկ քանի ամիս վերջը այս մտադրութիւնը գործադրութեան զբաւ: 30000 սկառուտներ այսքան բազմաթիւ տղայոց ժողով տեսնուած չէր երբեք — ծափահարեցին Նորին Վեհափառութիւնը՝ «Վինտսօր», բառքին մէջ 1911 յուլիս 4ի յիշատակելի օրը:

1912ին, «Մասնաւոր Խորհուրդ»ը քննեց սկառուտական ձեռնարկին նպատակները եւ մէթոտները, և Incorporationի արքայական հրովարտակ մը իրեն շնորհուեցաւ հաստատող թէ ձեռնարկը պաշտօնապէս ձանչցուած էր:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻՋՈՅԻՆ

1914ի պատերազմին, հազարաւոր սկառուտներ իրենց սայլերով և վրաններով, ծովային սկառուտներ իրենց նաւերով և կազմածով պատրաստ էին ճամբայ ելլելու, փոքրաթիւ միութիւններով, դէպի իրենց բանակատեղիները, օգոստոսի արձակուրդին առթիւ: Հեռագիրը եկաւ յանկարծական փոփոխութիւն

մը մտցուց անոնց արշաւներուն նպատակին մէջ. ամբողջ երկրին մէջ սկառուտները շարժման մէջ դըրուեցան ոստիկանութեան տնօրէնին հրամաններուն ներքեւ և պաշտօն ստացան պաշտպանելու երկաթուղիի կամուրջներ, հեռագրի և հեռաձայնի թելեր, եւ այլն:

Միեւնոյն ատեն, նաւատորմի ղին սպասարկութեան կոչուած եզերապահներուն տեղ դրուեցան՝ եզերքներու հսկողութեան համար, ծովային սկառուտներ՝ որոնք ծովակալին հրամաններուն ներքեւ, այս պաշտօնին վրայ մնացին մինչեւ պատերազմի վերջը: 23000ի չափ երիտասարդներ փոխն ի փոխ կատարեցին այս պաշտօնը:

100000է աւելի հին սկառուտներ և խմբապետներ Նորին Վեհափառութեան ծառայութեան մէջ մտան և արիարար կատարեցին իրենց պարտականութիւնը: Կրնայ ըլլալ որ անոնք ուրիշներէ աւելի բաղդաւոր եղած ըլլան, բայց պէտք է ընդունիլ թէ անոնք մասնաւոր գովեստներու և պատիւներու արժանացան: Այս կտրիճներէն 10,000ը իրենց կեանքը նուիրեցին հայրենիքին:

Պատերազմին սկիզբը, երկու միլիոն անգլիացի կամաւոր արձանագրուեցան: Մէկ միլիոն Անգլիացի չկարողացան զինուորագրուիլ՝ գլխաւորաբար այն պատճառով որ ֆիզիքական թերութիւններ ունէին, որոնց առաջքը կրնար առնուած ըլլալ:

Հինգ միլիոն Անգլիացիներ ալ ձեռնպահ մնացին:



«Առաջնակարգ կայսրութիւն մը կարելի չէ կանգուն պահել երրորդ կարգի մարդոց միջոցաւ», ըսած է Լօյտ ճօրճ, և թէպէտ մարմնական առողջութեան կ'ակնարկէր ան, սակայն մտքի առողջութեան համար ալ ճիշտ է այս խօսքը:

ԲՆՈՒԹԻՒՆԸ ԻՅՐ ԱՌԱՋՆՈՐԴ

Մկառտութեան նպատակն է թէ մէկը և է թէ միւսը զարգացնել և օգնել երիտասարդներուն՝ ըլլալու կարող և և երջանիկ քաղաքացիներ:

Մկառտական ձեռնարկին էական յատկանիշը անոր ոգիին մէջ է, և անտառային արկածախնդրական զրոյցներով և բնութեան սիրովն է որ կարելի է այդ ոգին դրոշմել:

Որ տղան կրնայ անզգայ մնալ, նոյնիսկ նիւթապաշտ մեր զարուն մէջ, կոյս բնութեան կամ ազատ ուղիի հրաւերին: Կրնայ ըլլալ որ մեր նախնական բնազդն է որ երեւան կ'ելլէ այս առթիւ: Ինչ որ ըլլայ ալ այս բնազդը կայ ու կը մնայ և մողական բանալիի մը պէս լայն կը բանայ այն դուռը ուրկէ կը թափանցեն մաքուր օդը և արևը, առանց որոնց այնքան կեանքեր սրտում և միօրինակ պիտի մնային: Բայց սկառտական դրութիւնը ասկէ անդին ալ կ'երթայ:

Վարքի գաւառներու զիւցաղները, հետախոյզները և աշխարհագէտները, ծովերը ասպատակողները, ինչպէս նաև օդի աշխարհակայները երիտասարդներուն համար վայլուն հմայիչներ են: Ու կայտառ գուարթ պիտի երթան անոնց հտեէն, բաւական է որ առնականութեան և յանդգնութեան, արկածախնդրութեան և ճիգի կարողութեան և ճարպիկութեան, ուրիշներու համար ուրախ անձնագոհութեան երգը երգեն իրենց: Այս ամէնը տղու մը հոգիին ալ մարմինին ալ սնունդ կը ջամբէ:

Սկառտութեան շնորհիւ տղան սկառտի տարազին տակ, Անտառարնակ Մարդոց մեծ եղբայրակցութեան անդամի մը կը փոխուի: Կը սորվի հետքի մը հետեւի և նշանները ճանչնալ, նշաններով խօսիլ, կրակ վառել, ապաստարանը շինել և կիրակուր կփել:

Իր միութիւնն է ընկերներու խմբակ մը՝ որուն կը հրամայէ իրենց պետը, — իր ընկերներէն մէկը: Ահա իրեն համար կազմուած, բնական խումբը, որ կրնայ ըլլալ բարեբար կամ վնասակար: Ահա անհատին համար անձնազստումի և պատասխանատուութեան առիթը: Ահա՛ արուեստակցական ոգին կազմուած՝ խմբակին պատուոյն համար, այնքան ուժեղ՝ որքան ո և է դպրոցի մը տեղական ոգին:

Օտար ազգերու համար, սկառտներուն գաւազանները աւելի կոթեր են, բայց սկառտին համար, բոլորովին տարրեր բան մը կը ներկայացնեն անոնք: Իր գաւազանը, իր սեփական totemովը (անասունի պատկերովը) և իր մասնաւոր նշաններովը զարգարւած, առանձնայատուկ դրոշմ մըն է, իր գաւազանին նման, սկառտը բազմութեան մէջ, անհատականութիւն մըն է որ ունի իր առանձնայատուկ զիծերը, իր առանձնայատուկ կարողութիւնները: Հօտին մաս կը կազմէ բայց իր յատուկ էակութիւնը (entity) ունի: Կեանքին ուրախութիւնները ճանչնալ կը սորվի բացօթեայ կեանքին մէջոցաւ:

Կայ նաև իմացական մասը: Տակաւ տողորուկով բնութեան զխտութեամբը, տխրօճ հոգին, կը մեծնայ և իր շուրջը կը դիտէ: Բացօդեայ կեանքը դերագանց դպրոցն է որ թոյլ կուտայ դիտել և հասկնալ հրաշալի տիեզերքին հրաշալիքը:



# Ս Կ Ա Ո Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն Ո Գ Ի Ն

(Թեկադրութիւններ սկաուտ վարիչներուն)

Ա.

1. Ամէն բանէ առաջ, խմբապետը կամ առաջնորդը մտքի առջեւ ունենալու է այն խորունկ ճշմարտութիւնը որ խտացուած է սա խօսքին մէջ. «Փիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»: Սկաուտութիւնը առնուազն երեսուն եւ վեց տարուան կեանք ունի այսօր, և վախ կայ որ, ինչպէս պատահած է Ֆրէսպէլի եւ ուրիշներու հիմնած գործին համար, ժամանակակից ամէնէն հանձարեղ մանկավարժին Պէյտըն Փաուըլի գործը խեղաթիւրուի, սպաննող զիրը սպրեցնող ոգիին տեղը յափշտակէ գրաւէ, զաստիարակութեան այդ պատուական գրութիւնը մեքենայականանայ: Կը կրկնեմ, հրահանգողներուն առաջին հոգը պէտք է ըլլայ աղէկ թափանցել սկաուտութեան ոգիին, և զայն քանդակել իրենց զիին խորը, կարեւորը ա՛ս է, անփոփոխելին ա՛ս է: Մնացեալը, այսինքն՝ միջոցները, կրնայ փոխուիլ միջավայրին համեմատ և առաջնորդին հնարամտութեան չափովը: Մնաց որ, Պէյտըն Փաուըլ ինքն իսկ այս վտանգէն կը վախնայ իր անձին համար, և օգտակար կը գտնէ ատեն ատեն նորէն կարգալ իր զիրքը (Scouting for boys), իր սկզբնական մտածումներուն յատուկ տեսիլը ունենալու համար: Ե՛ւս առաւել նոյնը պէտք է ընեն խմբապետները, և առաջնորդները:

2. Բայց սկաուտութեան հիմնադիրին ոգիին իրօք կարենալ թափանցելու համար, իր պաշտօնը

անկեղծ համոզումով ի գործ դնելու համար, առաջնորդը պէտք ունի գիտնալու անոր հոգեբանական լուրջ եւ ամուր իմերը:

3. Եթէ ճիշտ է Պէյտըն Փաուըլի լաւատեսութիւնը, ամէնէն յոռի նկարագիրին մէջ իսկ հինգ առ հարիւր բարեմասնութիւն կայ: Խնդիրը այդ բարեմասնութիւնները փնտռել զտնելուն եւ ութսունէն իննսուն առ հարիւր համեմատութեամբ զարգացնելուն վրայ է: Այս գործը արդիւնաւորող պարզան սա է որ առաջնորդը իր խմբակի սակաւութիւ սկաուտներու իւրաքանչիւրովը զատ զատ զրազելու զիւրու թիւնը ունի, հետեւայ հիմերուն վրայ, նկարագիր, Չեռական գործունէութիւն, Մարմնական առողջութիւն եւ զարգացում, Երջանկութիւն, Ծառայասիրութիւն:

Բայց չի բաւեր միայն գիտնալ ամէն մէկ տղու Փիզիքական վիճակը եւ բնաւորութիւնը, պէտք է զիտնալ նաև այն միջավայրը ուր ան կ'ապրի, ի հարզին հակազդելու համար: Դժուարին աշխատութիւն որ կը պահանջէ մեծ համբերութիւն:

4. Սկաուտը նախանձախնդիր պիտի ըլլայ «պարտականութեան մարդ» ըլլալու, այսինքն իր ներքին մղումներուն, իր ձգտումներուն, իր բնազդներուն՝ ընկերո՞ւթեան համար օգտակար ուղղութիւն մը տալու: Սկաուտական Օրէնքը յստակ կերպով կը պատկերացնէ այդ ուղղութիւնը: Այդ Օրէնքին ամէն մէկ յօդուածը, այդ պատուիրանքին իւրաքանչիւրը կ'ըսէ թէ ինչպէս պէտք է սպրի մարդ միշտ եւ ամէն տեղ: Այդ Օրէնքը հրամայական բնոյթ ունի և ինքզինքը կը հարկադրէ, պատճառաբանութիւն չի վերցնել ան:



5. Բայց եթէ պատճառաբանութիւնն չի վերցնելը՝  
բացատրութեան կը կարօտի . առաջնորդը պէտք է ցոյց  
տայ թէ ինչ պարագաներու կը պատշաճի ան, պէտք  
է մտնրամտնէ այն զանազան կերպերը՝ որոնց ըն-  
դունակ է պատուէրի մը գործադրութիւնը :

Մէկ կողմէ պէտք է ցոյց տայ Բարխին «Մի», ու-  
թիւնը՝ կեանքին զանազան պարագաներուն մէջ,  
այն զանազան ձևերը զորս կ'առնէ ան, միւս կողմէ,  
պէտք է զգուշանայ տարտամ սահմաններէ, եւ ա-  
ռօրեայ կեանքէն քաղուած թանձրացեալ օրինակնե-  
րու միջոցաւ ցոյց տայ Բարխին գործադրութիւնը  
կեանքին մէջ :

Սկառուտին երգումը եւ զայն խորհրդանշող ե-  
րեք վերամբարձ մատները միութեան (ուրիշին օգ-  
նել) կը վերածեն տասներկու պատուիրանքը : Սկա-  
ռուտին փողկապին կապը իրեն պիտի յիշեցնէ առօր-  
եայ «բարի գործի» պարտականութիւնը : Իսկ առօր-  
եայ կեանքին համար առիթներէն օգուտ պիտի քաղէ  
առաջնորդը՝ բարին գործադրել տալու համար իր  
սկառուաներուն, ինչպէս նաև գտնել տալու ամէն ինչ  
զոր ըսել կ'ուզէ Օրէնքը, զանազանել տալու ար-  
դիւնած բանը պատուիրուած բանէն : Պատմու-  
թիւններն ալ, ինչպէս նաև զանազան բա-  
րենպատակ Միութիւններու (Ligue) ծանօթացումը  
(Գնորդներու ընկերային Միութիւնը զուցէ ամէնէն  
քիչ ծանօթներէն մէկն է . ան նպատակ ունի մղել  
յաճախորդները նուազեցնելու իրենց ծախքերը՝ բան-  
ւորներուն կեանքը հեշտ ընելու համար) թանկագին  
օժանդակութիւն մը պիտի բերեն իր այս գործին մէջ :

Սկառուաները շատ անգամ յուսահատ կերպով կը

հարցնեն . «Ամէն օր ի՞նչ բարիք կրնամ ընել» : Ա-  
ռաջնորդները պէտք է հասկցնեն թէ անհամար բա-  
րիք կայ ընելու կեանքին մէջ, բաւական է որ սկա-  
ռուտը հետամուտ ըլլայ բարի գործ մը կատարելու,  
չատ համեստ գործ մը (վնասակար տունկերը խլել,  
ճամբուն վրայի նարնջի, լեմոնի, ձմերուկի կեղևը  
վերցնել, եւ այլն եւ այլն), եւ ոչ քաջագործութիւն մը :

6. Տրուած պատուէրի մը ազդեցութեան աս-  
տիճանը կը կշռադատուի այն չափով որ պատուէրը  
ընդունողը զայն կը գործադրէ տուողին բացակայու-  
թեանը : Արդ այս ազդեցութեան աստիճանը կախում  
ունի այն համարումէն ու համակրութենէն զոր ստո-  
րադասը կը զգայ գերադասին հանդէպ : Հոգեբանա-  
կան ճշմարտութիւն մըն է որ սղան մեծագոյն չա-  
փով համարում և համակրութիւն կ'ունենայ ոչ ի՞նչ  
գիտունի մը հանդէպ, այլ իրմէ քիչ մը աւելի մեծ  
և ինչ ինչ յատկութիւններ ունեցող (ուժով, անվախ,  
ճարպիկ, աջողաձեւուն, վեհանձն, ուղղամիտ, անկեղծ,  
խելացի, կորովի, պաղարիւն, խորհրդատու, տկարին  
պաշտպան, անոխակալ, եւլն .) ուրիշ տղու մը հանդէպ  
որ ինքզինքը զարգացնել ուզէ և այդ բանին համար  
կարևոր եղող միջոցներուն դիմէ :

7. Սկառուութեան հիմնադիրը, իբր յստակատես  
հոգեբան, տղուն մէջ տիրող գանազան բնազդներուն  
մէջէն ընտրած է հիմնականը — կրուելու բնազդը —



և հանձարեղ միջոցներով անոր կը ջանայ տալ նպատակադարձար ուղղութիւն: Անտեղի է, անմտութիւն է բնազդները ջնջել ուզել. պէտք է միայն բարեյարձար ուղղութիւն տալ անոնց: 8—12 տարեկան հասակին մէջ, կռուելու բնազդը մասնաւոր զորութեամբ մը ի յայտ կու գայ. այդ հասակին մէջ, տղան կը կռուի՝ կռուելու, զուարճանալու համար, և ոչ մասնաւոր նպատակաւ մը: Պէտք է օգուտ քաղել այս բնական ձգտումէն և յարձար ուղղութիւն տալ անոր, և ոչ թէ այդ բնազդը արգիլել փորձել:

8. Քիչ յետոյ, և գրեթէ միտժամանակ, երեւան կու գայ ընկերային բնազդը: Տղան կը զազրի առանձին խաղալէ, ընկերներ կը փնտռէ, խումբ ր կը կազմակերպէ, նոյնպէս առանց նպատակի, պարզապէս խումբեր կազմակերպելու համար, ի ռումբեր սակայն, որոնք միւս շնազդէն — կռուելու բնազդ — ևս մղուած, հրոսներու համեմատութիւնները կ'առնեն երբեմն: Դաստիարակութեան մեթոտը հոս ալ նոյնն է, անօգուտ է խմբուելու բնազդը ջնջել փորձել, պէտք է, ընդհակառակը, օգուտ քաղել անկէ և օգտակար նպատակի մը ծառայիցնել զայն: Կռուելու բնազդին վսեմագոյն ձևը պիտի ըլլայ, այդ ճիգին բնագունակ տարիքին մէջ, ինքնանուաճումը, իր իսկ մի ցանիչը կտրելու ջանքը:

9. Իր իսկ մրցանիչը կոտրել, ինքզինքը գերազանցել, և ոչ ուրիշը: Ահա կարևոր կէտ մը ևս: Ոչ թէ ուրիշ սկառուտներու հետ մրցելով, այլ դժուարութեանց հետ մաքառելով է որ սկառուտը կը շահի աստիճանները: Բայց սա չի նշանակեր թէ բարեյորդոր նախանձը բացակայ է սկառուտական դրութենէն. ընդհակառակը: Սա կայ միայն որ բարեյորդոր նախանձը արժարժողը արտաքին արժէք ունեցող վարձատրութիւն մը, մրցանակ մը չէ: Խաղի ձևէն անդին չանցնիր ան: Piquet—totempը, որուն այնքան մեծ կարևորութիւն կու տայ Պէյտըն Փատուը, ոչ թէ անհատին, այլ խումբին ընծայուած պատիւ մըն է, և այդ պատիւին արժանանալու համար՝ խումբին ամէն մէկ անդամը ինքզինքը կատարելագործելու, բարձրանալու պիտի նկրտի:

Առաջնորդները աղէկ կ'ընեն որ, խմբական մրցումներու մասնակցելիք ամէն մէկ անդամին յարաբերական արժէքը զիտնալու համար, ոչ թէ առաջին եղողը, այլ վերջին չեղողը որոշել ուզեն: Այս հնարքին շնորհիւ, խումբին ամէնէն տկարը ամէն ջանք պիտի ընէ յաջողելու համար:

Յուստիքը, պայմանաւ որ բաղդախաղի չվերածուի, պատուական խաղ մըն է, որ շատ լաւ կը պատշաճի վերը պարզուած նպատակին, շատ բարեյարձար կերպով դոհացում տալով հանդերձ տղուն կռուելու բնազդին: Նոյնը իմանալ պատքէթ պոլին համար որ նուազ բուռն ըլլալու առաւելութիւնը ունի:

Մնաց որ սկառուտութիւնը, ծայրէ ի ծայր, աս-



պետական ոգիին վրայ հիմնուած ըլլալով, օգտակար նպատակի մը համար կուուելու դաստիարակութիւնն է : Այս կերպով է նաև որ Պէյտըն Փառուրլի ուղէ դաստիարակել տղոց բնազդական ճաշակը ոճիրներու, սպանութեանց, աւազակութեանց տեսարաններու եւ սրատմութեանց համար :

10. Բարոյական դաստիարակութեան համար Պէյտըն Փառուրլի ընտրած մէթոտն է կեղծիքի (fiction) վրայ հիմնուած զննութիւնը, խորհրդածութիւնը : Կեղծիքը սա է թէ սկառտը կուուող մըն է թշնամի ոյժերէ չըջադատուած, պէտք է օձիքը ազատէ՝ իր անձնական ուժերովը, այդ կեղծիքի ձևը սքանչելիօրէն համաձայն է պղտիկ մանչուն ըզձանքին, եւ այս պարազան մեծ արժէք կու տայ Պէյտըն Փառուրլի ձևնորկին :

Յ. Թ. ՀԻՆԴԼԵՍՆ



## ՍԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ ՄԵԹՈՏԸ

(ՅՈՐԴՈՐՆԵՐ ՍԿԱՌԻՏ—ՎԱՐԻՉՆԵՐՈՒՆ)

### ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Մեր ծրագիրը կը ձգտի չորս նպատակներու. —

Ա. Դաստիարակութիւն անհատական նկարագրի. — զիտնա դժուարութեանց յաղթել գիտնալ գիտել, վստահիլ իր անձին, ասոնք՝ շահելու համար սկառտի նշանակը :

Բ. Զեռական ճարտարութիւն եւ փոքր արհեստներ՝ որոնք կրնան մանուկին օգնել կեանքին մէջ շինելու համար իր ճամբան, ասոնք՝ ստանալու համար մասնագիտութեան նշանակները :

Գ. Մառայութիւն հայրենիքին, իբր հրշէջ չըջուն հիւանդապահ, նաւազ, և նման հաւաքական ճառայութիւններ՝ զորս խուժը մը կրնայ մատուցանել :

Դ. Ֆիզիքական աւուղջութիւն, քաջախերիով մանուկները կատարելու շատ մը փորձեր, եւ խնամք տանելու մարմինին :

### ՄԵՐ ՇՍՐՔԵՐԸ

Մեր շարքերը կը կազմեն

Ա. ԳԱՅԼԻՆՆԵՐԸ, 8—12 տարեկան, որոնք կը ձգտին անհատապէս զարգացնելու իրենց մարմինն ու միտքը :

Բ. ՍԿԱՌԻՏՆԵՐԸ, 11—18 տարեկան, որոնք կը զարգացնեն իրենց նկարագիրը և զիտակցութիւնը



այն ծառայութեան՝ զորս անոնք իրենց ընկերոջը կը պարտին :

Գ. ԵՐԷՅ ՍԿԱՌԻՏՆԵՐԸ, 18 տարեկանէն վեր, որոնք իրենց սկսուած խօսակցութիւնը կը պահեն իրենց քաղաքացիի գործունէութեանը մէջ :

Գայլիկներու կազմակերպութիւնը ինչո՞ւ ըրած ենք : Տասնէն տասներկու տարեկան մանուկներու մէջ ոճրագործական հակումներու զարգացումը ցոյց կու տայ թէ անազնները այդ տարիքին մէջ է որ կը ճշտուին, և հետեւաբար անհրաժեշտ է մանուկին նկարագրիւր կազմել անոր սկսուած դառնալու վայրկեանէն ստալ : Անոնց ծրագրիւր նոյնն է ինչ որ սկսուածներունը : Մանրամասնութեանց մէջ ան կը պատշաճի աւելի փոքր մանուկներու հոգեբանութեան : (Այս մասին տեսնել իմ «Գայլիկներու գիրքը» երկս) :

Երէցներու կազմակերպութիւնը ընկու մեղ մղած է երկար առնէ ի վեր զգացուող պէտքը՝ մեր աւելի տարեց մանուկներն ալ պահելու մեր շարժման ազդեցութեան տակ, իրենց կեանքին այն փափուկ շրջանին, ուր մանկական ժամանցները անբաւական կը դառնան իրենց, և ուր հասուն տարիքի փորձութիւնները իրենց կը սպառնան : Ասոնց մասին ալ պահած ենք սկսուածներու սկզբունքներն ու մեթոտները, բայց այնպիսի փոփոխութիւններով զորս անհրաժեշտ կը դարձնէ չափահասի հոգեբանութիւնը և որոնք կարևոր են աւելի որոշ կերպով պատրաստելու համար զիրենք իրենց առջև բացուող սպարէզին : Այսպէս, ան պիտի ընտրէ իր փափաքածը՝ ընտրութիւն մասնագիտութիւններու մէջէն, ինչ որ պիտի օգնէ իրեն երբ հետեւի բարձրագոյն կամ մաս-

նադիտական վարժարանի մը, և զինքը պիտի մշտմասնագիտութեան մը : Խնդիրը չի կայանար սկսուած հանելու մէջ իր պատկանած խումբէն այլ հոն պահելու զայն՝ անոր տալով իր տարիքին եւ պէտքերուն աւելի համապատասխան գիրք մը, եւ առկա տալով անոր պետին կողքին ստանալու իր որոշ պատասխանատուութիւնը :

ԴԵՊԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Մեծ է անհրաժեշտութիւնը բնութիւնը եւ բացօդեայ կեանքը ճաննալու : Էական տարր մըն է սա մեր ծրագրին մէջ : Եւ ան է արդէն գլխաւոր ազդակը այն յաջողութեան, զոր սկսուածութիւնը գտաւ : Մանուկներու ալիքը՝ որ դէպի քաղաքներու գրասենեակները եւ աշխատանոցները կը խուժէ՝ աւելի քան երբեք կ'որևոր կը դարձնէ ծանօթութիւնը բնութեան եւ բացօդեայ կեանքի :

Մեր վիպական ծիսարանը, մեր խմբակներու խորհրդանշանները, անասուններու ազդակները բոլոր ասոնք հասարակ տեղիք կրնան թուիլ մեր օրերու հասուն եւ գեր-քաղաքակրթուած մարդոց :

Բայց մանուկներուն՝ բան մը կը խօսին այդ բոլորը : Եւ ինչ որ աւելին է՝ այդ բոլորը դաստիարակիչ արժէք մը կը դառնան ամէն անոնց ձեռքին մէջ, որոնք զիտեն գործածել զանոնք :

«Դառնանք Դէպի Բնութիւնը» : Ահա մեր սովորութիւնը : Դարու մը մէջ՝ որ հետզհետէ աւելի կը նվազանանայ, այդ կողմին է որ պէտք է ձգտինք : Բնութեան սէրը, որ գրեթէ ամէն կարգի մանուկ-



ներու համար այ հասարակաց է, լաւագոյն միջոցն է մանուկին հաղորդելու դիտելու եւ ըմբռնելու ձիրքը, գեղեցիկին զգացումը, աւելի բարձր մտածում մը եւ աւելի լայն շահագրգռութիւններ, կեանքի եւ սեռի օրէնքներուն մասին աւելի առողջ տեսակէտ, եւ ուղղակի իրականացումը ստեղծագործ Աստուծոյ:

ԽՄԲԱՊԵՏԻ ՄԸ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խմբապետ մը պէտք է լաւ թափանցած ըլլայ կրօնական եւ բարոյական այն նպատակին որմէ ներշնչուած են, մեր ծրագրին մէկ ծայրէն միւսը, բոլոր գործնական հրահանգները:

Պէտք է անձնական այնպիսի զիրք մը եւ նկարագիր մը ունենայ՝ որ ապահովէ պղտիկներուն վրայ իր գործ գրած բարոյական ազդեցութիւնը:

Ան պէտք է խօսքի բաւարար վճռականութիւն ունենայ որպէսզի աշխատանքը տարուի կորովով եւ յարատեւութեամբ:

Ան պէտք է քաջ գիտնայ սկսուտի դաւանանքը եւ լրացուցած ըլլայ քսան տարոն:

Խմբապետ մը պէտք է առնուազն երեք ամիս փորձ ընէ՝ այդ փորձը ստանալէ առաջ: Պէտք է ան ատեն ունենայ տեսնելու թէ սկսուտներու ծրագիրը կու տայ իրեն անկէ սպասածը: Պատահած է յաճախ, նման կազմակերպութեանց մէջ, որ մէկը, պաշտօնի անցած՝ մեծ յոյսերով եւ գեղեցիկ իտէալներով լեցուն յետոյ հասկնայ թէ չպիտի կարենայ համաձայնիլ պետերուն հետ, թէ տաղանդ չունի պղտիկներով զրգելու համար, եւ այլն:

Խմբապետին զիրքը մեծ կարեորութիւն ունի: Իր նկարագրին վրայ է, մեծ մասամբ, որ պղտիկները իրենցը պիտի կերտեն: Պէտք է տեսնէ ուրեմն իր դերը շատ աւելի բարձր տեսակէտէ քան իր անձնական յարմարութիւնները, եւ հաւաքականութեան բարւոյն համար՝ հաւանի երկրորդ գծի վրայ տանիլ իր անձնական զգացումները: Ճշմարիտ կարգապահութիւնը ուրիշ բանի մէջ չի կայանար: Ու հո՛տ է իրական դժուարութիւնը:

ՄԵՐ ՄԵԹՈՏԸ

Մեր դարուն մէջ, մեր ժողովուրդին համար մեծ վտանգը այն է որ բաւարար կերպով կարդապահ չէ: Մեր անձնական կարծիքները պետութեան բարիքէն շատ աւելի վեր կը դասենք: Թերութիւն մըն է աս դոր կ'ուզենք դարմանել՝ յանձն առնելով կրթե վաղուան սերունդը: Բայց ամէն դաստիարակութիւն մեծ մասամբ, կազմուած է օրինակէն:

Երբ կը փորձէք մանուկներուն լաւ դաս մը տալ՝ ձեզ նման կը գտնեմ ձկնորսի մը որ կ'ուզէ ձուկ բռնել: Եթէ ձեր կարթին անցընէք այն սնունդի տեսակէն զոր դուք կը սիրէք ինքներդ, հաւանական չէ որ մեծ բան մը ձեռք ձգէք, ամէն պարագայի մէջ ոչ այն ձուկերուն տեսակ, որոնք վախկոտ են:

Ահա թէ ինչո՛ւ համար պէտք է ընտրել ձուկերուն սիրած սնունդը:

Նոյնը մանուկներուն համար: Եթէ անոնց քարոզէք բարձրնիւթերու վրայ՝ չպիտի ձեռք ձգէք ձեր ուզածը: Լաւագոյն եղանակն է անոնց առօջարկել



բան մը որ իրապէս հրապուրէ զանոնք եւ շահագրգռէ:  
 Յետոյ կրնաք ձեր ճաշակին վարժեցնել զանոնք:  
 Ձեր մանուկներուն վրայ ազդեցութիւն ունենալու համար՝ բարեկամ մը եղէք անոնց:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Մանուկը դաստիարակելու հիմնական պայմանն է ինքզինքը մանուկին տեղ դնել և իրերը զիտել անոր տեսակէտովը: Ձեր նիւթը ներկայացուցէք անոր այն երեսը, որուն տակ ան տեսնելու հաճոյքը կը զգայ, եւ արդիւնքը պիտի ըլլայ այն որ մանուկը ինքզինքը կրթէ եւ դուք պէտք չունենաք մուրճի հարուածներով ներմուծել անոր գլխուն մէջ ձեր ուզած բանը:

Յիշեցէք յետոյ որ ձեր անձնական նկարագիրը չպիտի ուշանայ թափանցել ձեր տղոց մէջ, եթէ անհամբեր էք դուք՝ նոյնը պիտի ըլլան անոնք:

Պատրաստուեցէք առաջուրնէ այն բանին թէ ձեր տղաքը չպիտի կարենան իրենց միտքը կեդրոնացնել: Ըստ այնմ կազմակերպեցէք ձեր ուսուցումը: Մի սպասէք որ ձեր տղաքը երկար ատեն մեծ ուշադրութիւն տան նիւթի մը՝ ինչ ալ ըլլայ այդ նիւթը՝ մինչեւ որ զանոնք վարժեցնէք կատարելու գայն: Պէտք է ընդառաջ երթալ անոնց, և անոնցմէ չպահանջել շատ զօրաւոր հանգրուաններ: Կարճ եւ հաճելի ումպ մը բանէ մը, յետոյ մէկ ուրիշէն, հետզհետէ երկարելով ումպերը, մինչեւ որ սովորին ըմպել երկար ումպերով:

ՈՒՍՈՒՑՈՒԹՐ ԽԱՂԵՐՈՎ

Պէտք է ամէն օր առաջուց մտածել թէ ինչ կ'ուզէք ըսել ձեր նիւթիմասին. յետոյ այդ նիւթը ըսէք իրենց երբ աւիթը կը ներկայանայ, — բանակատեղիին մէջ, խաղերու ընթացքին, պարապուրդի ատեն եւ ոչ թէ պատրաստուած երկար ձառի մը մէջ:

Ջրոյցները ընդօրինեցէք յաճախ գործնական փորձերով եւ վարժութիւններով, այնպէս մը որ կարենաք ձեր տղոց ուշադրութիւնը գրաւել եւ անոնց մէջ թափանցել ձեր տեսութիւնը:

Սկսուածներուն դաստիարակութիւնը պէտք է ըլլայ, որքան հնարաւոր է, փորձերով, խաղերով եւ մրցումներով:

Խաղերը պէտք է կազմակերպուած ըլլան մանաւանդ հակառակորդ էքիփներով և մէկ խմբակէն կազմելով մէկ էքիփ, և իւրաքանչիւրին գործօն դեր մը տալով խաղին մէջ:

Պէտք է խստիւ գործադրել խաղին կանոնները իրրեւ թէ տիտիփինի փորձ մը ըլլար:

ՀԱՒԱՔԱՏԵՂԻ

Նպատակը կէս առկէս ձեռք բերուած կ'ըլլայ՝ եթէ սկսուածները իրենց տրամադրութեան տակ ունենան սենեակ մը շարաթակաւն որոշ իրիկուններու համար, կամ եթէ կարելի եղած ըլլայ վարձել տեղ մը որ անոնց ծառայէ իրր հաւաքատեղի, իրր ապուր: Այս բանին համար ինչ զոհողութիւններ ալ ըլլայ՝ կ'արժէ, եթէ նոյնիսկ պարազան կը վերաբերի գիւղի մը ուր մէկ խմբակ միայն կայ:

Պէտք է որ այդ սենեակը լուսաւոր ըլլայ եւ օ-



դասուն: Պէտք է որ ձանձրանալիք տեղ մը չըլլայ: Լանդիպուժմը հրապուժիչ կ'ըլլայ հոն՝ եթէ այնտեղ գտնուին de genre նկարներ ոչ թէ սակայն բնանկարներ կամ հին դիմանկարներ:

Ձմեռը կրակ մը հոն:

Լետաքրքրական գրքեր եւ հանդէսներ:

Այս բոլորը կարելի է ձեռք ձգել առպնց մեծ դժուարութիւններու: Բարեկամներ կը գտնուին հարկաւ որ կը հայթայթեն, սկիզբը, կարասիները, խաղալիքները եւլն: Սկառուտները իրենք պէտք է ստանձնեն սենեակին մաքրութեան, զարդարանքին ու կահաւորման հոգը:

Պէտք է որ հաւաքատեղիին մէջ տիրապետէ կարգապահութիւնն ու կանոնաւորութիւն: Մասնաւորապէս պէտք է հոգ տարուի մաքրութեան: Այդ բանին խմբակի պետերը պէտք է պատասխանատու բռնուին իրենք, և ամէն մէկ խմբակ հերթով շարաթ մը ստանձնէ հաւաքատեղիին կանոնաւորութիւնն ու մաքրութիւնը:

Աւելի լաւ եթէ հողի կտոր մը կայ սկառուտներուն տրամադրութեան տակ, եթէ նոյնիսկ թափուր տարածութիւն մը ըլլայ ան կամ յետաբակ մը: Պէտք է տեղ մը ուր սկառուտները կարենան հիւղեր կառուցանել, կրակ շինել, գնդակ խաղալ, պարտէզ մշակել, ուսումնասիրել հետքեր եւլն:

Որքան հնար է՝ ձգեցէք որ պատանիները իրենք վարեն ակումբին գործերը: Երկրորդ փլանի վրայ մնացէք դուք, եւ ձգեցէք որ սխալներ ալ ընեն անոնք որպէսզի վարժուին իրենք զիրենք պատասխանատու ալ զգալ:

Հաւաքատեղին կնոջ մը զարդախուցին նման գեղեցիկ չպիտի ըլլայ հարկաւ, Պէտք է որ տղաքը ի հարկին կարենան մարզանք ընել հոն, գնդակ կամ ռոնըւուք խաղալ: Պէտք է ուրեմն այն տեսակ կարասիներ ըլլան զորս կարելի ըլլայ անկիւն մը ժողվել, դոցւոդ աթոռներ՝ օրինակի համար, փոքր սեղաններ, դարակ մը՝ ուր պահուին գիրքերը կամ խաղալիքները՝ երբ ժխորին ատենը գայ:

Իտէյալ ակումբ մը երկու սենեակէ կը բաղկանայ, մէկը՝ հանդարտ խաղերու, խօսակցութեան, ընթերցման համար, միւսը ազմկախառն վարժութիւններու, մարզանքի, եւայլն:

ՋՕՐԱՊՍՇՏՈՒԹԻՒՆ

«Սկառուտ», անունը զինւորական նշանակութիւն չունի: Նպատակ չունինք զինուոր դարձնել մեր տղաքը, ոչ ալ արեան ծարաւը տալ անոնց: Անշուշտ որ անոնց խօսելով հայրենասիրութեան մասին, անոնց ուսուցած կ'ըլլանք թէ քաղաքացի մը պէտք է պատրաստ ըլլայ իր պարտքը կատարել - պաշտպանելու համար իր հայրենիքը անոր վրայ յարձակողներուն դէմ: Պարտականութիւն մըն է աս զոր կը հարկադրեն իրեն իր հայրենիքին մէջ իր վայելած ապահովութիւնն ու ազատութիւնը: Ան որ կը խուսափի ուրիշներուն ձգելով այս պարտականութիւնը կատարելու հոգը՝ անարի եւ անազնիւ դեր մը կը կատարէ: Ամէն մարդ որուն կուրծքին տակ սիրտ մը կը բարախէ՝ խաղաղասէր է եւ պատերազմի թշնամի:



ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ուժ տուէք կարգապահութեան, կէտ առ կէտ  
և արագ հնազանդութեան՝ ամէնէն պղտիկ մասնա-  
մասնութեանց մէջ: Չեր տղոց թոյլ մի տաք որ ազ-  
մուկ ընեն առանց ձեր թոյլտուութեան, եւ սակայն  
երբեմն դժւար տուէք այդ թոյլտուութիւնը:

Չօրաւոր եւ բարգաւաճ ըլլալու համար՝ ժողո-  
վուրդ մը պարտաւոր է կարգապահ ըլլալ, եւ չէք  
յաջողիր զանգուած մը կարգապահ դարձնել՝ բայց ե-  
թէ կարգապահութեան վարժեցնելով անհատը: Կար-  
գապահութիւն ըսելով կը հասկնամ համբերատար  
հնազանդութիւն մը իշխանութեան և պարտակա-  
նութեան միւս ներկայացուցիչներուն:

Այդ բանին կարելի է հասնիլ ոչ թէ զսպողա-  
կան միջոցներով, այլ քաջալերանքներով, պատանիին  
ուսուցանելով կարգապահութիւնը նախ իր անձին  
հանդէպ, յետոյ իր ետին և իր եսասիրական հաճոյքնե-  
րուն զոհաբերութիւնը ուրիշներու բարիքին համար:  
Այս դաստիարակութիւնը կ'ըլլայ մանուսանդ օրինա-  
կի միջոցաւ, ցոյց տալով պատանիին թէ իրձէ ալ կը  
սպասուի միեւնոյն բանը: Ահա ձեր գործը:

Կարգապահութիւն ձեռք չի բերուիր տղան  
պատժելով գէշ ունակութեան մը համար, այլ անոր  
փոխարէն անոր տալով լաւագոյն զրազում մը որ  
պիտի զրաւէ ու շարքութիւնը եւ որ հետզհետէ զայն  
պիտի վարժեցնէ մոռնալ եւ լքել հիմը:

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Թշուտութիւնը մ'ծ մասամբ յետաջ կու գայ  
անկէ որ մայրիկ խնայելու սովորութիւնը չունին:

Նոր դարմաններ փոտուելէ առաջ, մեր ընկերային  
բարկարգիները լաւ կ'ընկին այս հարցը: Դնելով ի-  
րենց մտահոգութեանց առաջին շարքին վրայ, եթէ  
հաստատուի խնայողութիւնը՝ ապահովաբար քչրան  
պիտի մնայ ընկիւք: Եթէ սեւուենդը որ կուզայ սոր-  
վի խնայել, անմիջապէս մեծ տարբերութիւն մը յա-  
ռաջ պիտի գայ մեր ժողովուրդին նարագրիս եւ  
բարգաւաճմանը մէջ: Ահա ատոր համար է որ հաս-  
տատեցիր քեզու տակաւ խնայողական սնտուկներ:

ԺՈՒԺԿԱՂՈՒԹԻՒՆ

Անհաշուելի չարիք մը առաջ կը բերէ զաղտնի  
պահել մանուկէն այն բաները՝ որոնք կը վերաբերին  
սեռական հարցերու: Նոյնիկ հոգածութիւնը զոր ի  
գործ կը ընենք պատանիէն ծածկելու ամէն բան,  
զայն կը մղէ ինքը ընկու իր խուզարկութիւնները  
զաղտնիքին մէջ, ի վերջոյ կրելով այդ բանին վնասը:

Չեմ պատահած երբեք երիտասարդի մը որուն  
չարիք ըրած ըլլանք բացատրելով իրեն այս նիւթը ան-  
կեղծ եւ ախորջական կեպով մը: Ակտուտ վարիչ մը  
որ զղացական նախազգուշութեամբ մը, պիտի  
թողուր որ իր տղաքը այդքան զիւրաբեկ սառի մը  
վրայէն քայն առանց անոնց զգացնելու վտանգը ո-  
րուն կը դիմեն՝ ոճիր մը զործած պիտի ըլլար:

ՏԱՐԷՑՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Մեր ծրագրին մէջ մեծ տեղ ունի այն պա-  
տասխանատուութիւնը որ կ'իյնայ խմբակներու պե-  
տերուն: Ունեցէք եթէ հնարէ, լաւ օղնական մը



որպէսզի ան հրահանգումը շարունակէ եթէ ստիպ-  
ւած էք բացակայիլ դուք, և որպէսզի թեթևցնէ ձեր  
վարչական պղտիկ մանրամասնութիւնները:

Հիակատար վստահութիւն ցոյց տուէք ձեր  
խմբակի պետերուն, և զանոնք պատասխանատու  
կացուցէք իրենց տղոցը համար: Շատ բան սպասե-  
ցէք անոնցմէ, և շատ բան ձեռք պիտի ձգէք:

Ահա թէ ուր է յաջողութեան բանալին սկառ-  
տական դաստիարակութեան մէջ:

Մի փորձէք ամէն բան դուք ինքներդ ընել:  
Հակառակ պարագային ձեր տղաքը պիտի ըլլան  
պարզ հանդիսատեսներ, և այդ չէ որ կ'ուզենք:

### ԿՐՕՆԻԲԸ

Սկառտութիւնը չպիտի ծառայէր իր նպատա-  
կին, եթէ ան իր անդամներուն չճանցնէր կրօնքը:

Բայց ընդհանրապէս սխալներ կ'ըլլան կիրարկու-  
թեան մէջ: Մեր մէջ ըլլալով ամէն հաւատալիքի մա-  
նուկներ՝ չպիտի կարենանք որոշ կանոններ տալ այդ  
մասին, եթէ ուզենք իսկ: Կարելի է եւ պէտք է մա-  
նուկին ուսուցանել կրօնքը, բայց ոչ թէ շաքար խառ-  
նելով, չափազանց համեմելով, ոչ ալ խորհրդաւոր,  
մռայլ գոյն մը տալով անոր:

ՊԵՅՏԸՆ ՓԱՌԻԸՆ



I

## Ն Ո Ր Ը Ն Ծ Ա Յ ՊԱՏՐԱՍՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ



Ն Ո Ր Ը Ն Ծ Ա Ն

1. Պէտք է գիտնայ եւ բացատրէ սկառուտին դաւանանքը :
2. Պէտք է ճանչնայ հետախուզական գլխաւոր նշանները :
3. Պէտք է գիտնայ տալ և բացատրել սկառուտին բարեք :
4. Պէտք է գիտնայ կապել կարեոր հանգոյցները :
5. Պէտք է ունենայ անհրաժեշտ նախնական ծանօթութիւնները, գաւազանի, շարքերու, աստիճաններու, վաճառորութեանց, նշանի. նշանակի, համազգեստի և Հ.Մ.Վ.Մ.ի մասին :



ՍԿԱՌՈՒՏԻՆ ԴԱՒԱՆԱՆՔԸ

1. Սկառուտին խօսքը նուիրական է
2. Սկառուտը հնազանդ է
3. Սկառուտը հաւատարիմ եւ ուղղամիտ է
4. Սկառուտը միշտ կ'օգնէ ուրիշներուն
5. Սկառուտը բարեկամ է ամէնուն եւ եղբայր ամէն ուրիշ սկառուտի
6. Սկառուտը բարեկիրթ է
7. Սկառուտը մաքուր հայերէն կը խօսի ամէն ատեն եւ ամէն տեղ
8. Սկառուտը անասունները կը սիրէ եւ կը պաշտպանէ
9. Սկառուտը միշտ զուարթ եւ խանդավառ է
10. Սկառուտը աշխատասէր եւ կորոզի է
11. Սկառուտը տնտեսոյ է
12. Սկառուտը մաքուր է մտածումով, խօսքով և գործքով



# Դ Ա Ի Ա Ն Ա Ն Ք Ը

(Հրահանգներ սկսուած վարիչներուն)

## 1. ՍԿԱՌՈՒՏԻՆ ԽՕՍՔԸ ՆՈՒԻՐԱԿԱՆ Է

Երբ այլք պատուոյդ վստահեր են, և զուն անոնց կ'ընես դաւ, Ըսել է որ այդ պատիւը չունիս եղեր զու բընաւ:

Թ. Յ. ՊԷՐՊԷՐԵՍՆ

Սկսուտական դաւանանքին առաջին յօդուածը ամենամեծ խնամքով և և շատ պարզ ու թանձրացեալ ձևով պէտք է բացատրուի, որովհետև սկսուտին ապագայ ամբողջ կարգապահական ընթացքը անոր վրայ հիմնուած է: Հանդիսաւոր արարողութիւնն ալ շատ կը նպաստէ տղուն զգացնելու թէ որքան լուրջ բան մըն է իրմէ պահանջուածը: Բայց որքան ալ աղէկ բացատրուի, տղան շուտով կը մտնայ և տպաւորութիւնները վաղանցուկ են: Հետեւաբար պէտք է պարբերաբար թարմացնել յիշողութիւնը և տպաւորութիւնները:

Պատուաւոր մարդը ան է որուն խօսքին կարելի է հաւատալ, որուն կարելի է վստահիլ, որ չի ստեր երբեք և ոչ ալ կը խարէ, որ իր յանձնառութիւնը, խոստումը կեանքէն ալ վեր կը դասէ, նման «Թիթանիք»ի նաւապետին, որ իր կեանքին փրկութիւնը խորհելէ առաջ իր նաւուն մէջ գտնուող ճամբորդներուն կեանքին փրկութեան վրայ խորհեցաւ:

Եթէ սկսուած մը ըսէ՝ «Պատուոյս վրայ, այսպէս է», կը նշանակէ թէ այդպէս է: Նոյնպէս երբ սկս-

ուտ պետերէն մէկը սկսուտի մը կ'ըսէ՝ «Պատուոյդ կը վստահիմ այդ գործը», սկսուտը պարտաւոր է կրցածը ընել՝ յանձնառութիւնը կատարելու համար:

Եթէ սկսուած մը իր պատուոյն զրծէ ստելով կամ յանձնառութիւնը աղէկ չկատարելով, ա տ ո վ ի ո կ կ ը դ ա դ ը ի ո կ ա ու տ ը լ լ ա լ է:

Պատուաւոր մարդու մը կարելի է վստահիլ թանկագին զանձ մը, որովհետև պատուաւոր մարդ մը անիրաւ կերպով չ'իւրացնէ իրեն յանձնուած ունէ աւանդ:

Պատուաւոր մարդը խաղի մէջ խարդախութիւն չ'ըներ երբեք: Աւելին կայ. երբ սկսուած մը խաղի մէջ պարտուի, այրիաբար և անկեղծօրէն կը ծափահարէ յաղթական ընկերը և անոր ձեռքը կը սեղմէ:

Իրողութիւններու միջոցաւ ցոյց տալ սկսուտին թէ պտտասխանատու էակ մը կը նկատէք զայն և և կատարելագէս կը վստահիք իրեն: Առժամեայ կամ մնացուն պաշտօն մը յանձնեցէք իրեն, և ակնկալեցէք իրմէ որ հաւատարմօրէն կատարէ այս պաշտօնը: Շարունակ մի հսկէք իր վրայ՝ տեսնելու համար թէ կը կատարէ զայն: Թողէք որ ազատօրէն գործէ, նոյնիսկ սխալներ ընէ, և թէ հարկ է: Պատասխանատուութիւններ տալ, ա տ է նկարագիրը կազմելու լաւագոյն և ապահովագոյն միջոցը: Կարելի է եղածին չափ քիչ խօսիլ, կարելի է եղածին չափ շատ ընել, գործել տալ:

Պատուոյ ատեանն ալ թանկագին օժանդակ մըն է՝ պատասխանատուութեան մշակման տեսակէտով:



2. ՍԿԱՌԻՏԸ ՀՆԱԶԱՆԴԻ

Հընազանդէ՛ դու օրինաց, իշխանութեանց լե՛ր յարգող,  
Անոնց շնորհիւ ննջես անդորր, ընչ-քիչ՝ պատուոյդ մերժի գող:

Ռ. Յ. Պ.

Սկառուտը գիտէ թէ ուրիշներուն փորձառութիւնը որքան օգտակար, որքան կարևոր է իրեն համար որ անփորձ մըն է կեանքին մէջ, ան գիտէ թէ յաւակնտուութիւնը ապուշներու յանդուրձանն է: Եւ յետոյ հրամայել գիտնալու համար հնազանդիլ պէտք է:

Իր ծնողքին, իր խմբապետին, իր առաջնորդին չի հարցներ՝ «Ինչո՞ւ»: Նոյն խակ եթէ իրեն համար անհաճոյ հրաման մը ընդունի, գինւորի մը կամ նաւազի մը պէս՝ անմիջապէս կը գործադրէ զայն, որովհետեւ պարտականութիւնն է: Հրամանը գործադրելի վերջ, կրնայ հակառակ փաստեր առաջ բերել, բայց հրաման մը պէտք է անմիջապէս գործադրուի: Այոպէս կը պահանջէ կարգապահութիւնը:

Իբր օրինակ յիշատակել «Թիթանիք»ի նաւարկութիւնը և նաւազներու հնազանդութիւնը:

3. ՍԿԱՌԻՏԸ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՒ ՈՒՂՂԱՄԻՏ Է

Անկե՛ղծ եղի՛ր, ճշմարիտ մարդ, խօսքըդ սրտիդ արձագանդ,  
Կեղծող մարդը սին ստուեր մ'է, ոչ մարդ, մարդու լոկ պատրանք:  
Ռ. Յ. Պ.

Սկառուտը ուղղամիտ է, նախ իր անձին հանդէպ: Փորձութեան մը պարագային, խիղճը կ'ըսէ՝ ո՛չ, հակամիտութիւնը կ'ըսէ՝ ա յ ո՛ւ: Իր անձին հանդէպ ուղղամիտ սկառուտը իր խիղճին կ'անսայ, և ոչ իր հակամիտութեան: Ապա թէ ոչ հետզհետէ կ'իջնայ, փոխանակ բարձրանալու: (Յիշել՝ Բարձրացի՛ր, Բարձրացո՛ւր):

Սկառուտը ուղղամիտ է իր ծնողաց, իր երկրին օրինաց և անոնցպաշտօնեաներուն հանդէպ, այսինքն սիրայօժար կ'ընդունի անոնց իշխանութիւնը, սեւէ նհնգութեան ու ըմբոստութեան չի դիմեր՝ ուրանալու համար անոնց իշխանութիւնը, ընդդէմ ելլելու համար անոնց իշխանութեան: Ազգաձեւս տարր մը ըլլալ է՝ ախտավարակ եսամոլ «արիւթեամբ», մը դաւել և հետեւ իր ծնողացը, իր երկրին օրինաց և անոնց պաշտօնեաներուն:

Եթէ պատահի որ սկառուտ մը իր մտածունքներուն անհամապատասխան գտնէ սկառուտութիւնը, ուղղամտութիւնը կը պահանջէ որ հրաժարի, փոխանակ ստելու իր անձին և իրմէ գերադասներուն:



4. ՍԿԱՌԻՏԸ ՄԻՇՏ ԿՕԳՆԷ ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ

Դրամով միայն չէ՛ որ մարդիկ բարիք կ'ընեն իրարու,  
Արտին սէրը յայտնուելու թիւր թիւր  
ձևեր փոխ առնու :

Ռ. Յ. Պ.

Սկսուած ամէն բանէ առաջ իր պարտականութիւնը պիտի կատարէ, անոր զոհելով ի հարկին, հաճոյք, հանգիստ, անձի ապահովութիւն : Երբ վարանման մէջ ըլլայ երկու բաներէ մին ընելու մասին, ինքն իրեն պիտի հարցնէ՝ «ո՞րն է պարտականութիւնս», այսինքն՝ «ո՞րն է օգտակարը ուրիշներուն համար» եւ այդ բանը պէտք է ընէ : Ամէն ատեն պատրաստ պիտի ըլլայ կեանք ազատելու կամ վտանգի ենթակայ անձերու օգնելու : Ու ձեռքէն եկածը պիտի ընէ՝ զոնէ մէկ բարի գործ կատարելու համար ամէն օր սրեւէ մէկու մը հանդէպ :

Տղաք հակամէտ են կարծելու թէ իր նմանին հանդէպ պարտականութիւնը կը սահմանափակուի ու գործութիւն տալու մէջ : Պէտք է հասկցնել անոնց թէ իրական ծառայութիւնը, իրական այլասիրութիւնը ատկէ աւելի բան մըն է և յաճախ անձնուերութիւն կը պահանջէ :

Եթէ նկատի առնուի թէ մարդոց մէջ ամէնէն շատ տարածուած թերութիւնը անձնասիրութիւնն է, զիւրաւ պիտի հասկցուի այս պատուէրին կարեւորութիւնը :

Պէտք է հասկցնել (անասուններու կեանքին ուսումնասիրութեամբ, քաղաքակրթութեան պատմու-

թեան վերլուծումով, Մեծ Պատերազմին զասերէն օգտուելով, եւ այլն) թէ կեանքը հիմնուած է փոխադարձ օգնութեան, համերաշխութեան, գործակցութեան վրայ : «Ոչինչ կ'արժէ ան մարդը՝ որ օգտակար չէ ուրիշին» :

5. ՍԿԱՌԻՏԸ ԲԱՐԵԿԱՄ Է ԱՄԷՆՈՒՆ ԵՒ ԵՂԲԱՅՐ

ԱՄԷՆ ՈՒՐԻՇ ՍԿԱՌԻՏԻ

Նոյն խմորէն ստեղծուեցան ամէն  
մարդիկ նոյն տիպար,  
Եղբայրներ ենք մենք բախտակից,  
սիրենք ամէնքս զիրար :  
Ռ. Յ. Պ.

Երբ սկսուած մը ուրիշ սկսուած մը հանդիպի, նոյն խոկ եթէ անձանօթ է իրեն, պարտի անոր հետ կօտիլ, և օգնել անոր՝ ունէ կիրպով որ կրնայ, ըլլայ անոր յանձնառութիւնը կատարելու գործին մէջ, ըլլայ ուսելիք տալով անոր, կամ անոր մէկ պէտքը գոհացնելով : Սկսուած մը արհամարհանքով չի նայիր սոցքատին, և ոչ ալ, եթէ ինքը աղքատ է, ատելութեամբ կը նայի հարուստին : Իւրաքանչիւր սկսուած ամբողջ աշխարհի պզտիկ բարեկամը պիտի ըլլայ :



6. ՍԿԱՌԻՏԸ ԲԱՐԵԿԻՐԹ Է

Քաղաքավար բարք մարդոց ղէմ ար-  
դարութեան մի պարտք է,  
Անոնց մարդու նըկարագրին ին-  
տուցուած մի յարգանք է:

Ռ. Յ. Պ.

Սկառուար քաղաքավար է ամէնուն հանդէպ, բայց  
մասնաւորապէս կանանց եւ տղոց, ծերերուն, ան-  
կարներուն, եայլն, հանդէպ (հանրակառքին մէջ իր  
տեղը տալ, եայլն, եայլն):

Սկառուար քաղաքավար եղած կամ ծառայու-  
թիւն մը մատուցած ըլլալուն փոխարէն վարձատրու-  
թիւն չ'ընդունիր:

Պէտք է քաղաքավար ըլլալ ամէն պարագայի  
մէջ եւ ամէն մարդու նկատմամբ, նոյնիսկ իր հա-  
կառակորդին հանդէպ:

7. ՍԿԱՌԻՏԸ ՄԱՔՈՒՐ ՀԱՅՆԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻ

ԱՄԷՆ ԱՏԵՆ ԵՒ ԱՄԷՆ ՏՅԴ

Կարծիքներու ընդհարումէն մտքին  
համար լոյս ժայթքէ,  
Բայց վէճն ազնիւ պարտի ըլլալ,  
զերծ անձնական լուտանքէ:

Ռ. Յ. Պ.

Աշխարհիս ամէնէն տղեղ եւ տրամեցուցիչ երե-  
ւոյթներէն մէկն է Հայու մը համար՝ զեռատի հա-

յորդի մը, եւ ան ալ դպրոցական, որ հոգ չի տանիր  
մաքուր հայերէնով խօսելու, օտար կամ դռնիկ ռա-  
ւեր կը խառնէ անոր մէջ, եւ կը լղրճէ կ'ապականէ  
իր «մեծասքանչ» լեզուն:

Ձի բաւեր միայն դասարանի մէջ հայերէն խօ-  
սիլ, պէտք է նախանձախնդիր ըլլալ լեզուին մաք-  
րութեան՝ ամէն ատեն եւ ամէն տեղ, դպրոցէն դուրս,  
փողոցին մէջ, ընտանիքին մէջ, խաղալու ատեն,  
եայլն:

Գիտեմ դպրոց մը ուր «Մայրենի լեզու» անու-  
նով կազմակերպութիւն մը կայ, եւ որուն աշակերտ-  
ներուն աւագ պարտականութիւններէն մէկն է մա-  
քուր հայերէն խօսիլ ամէն ատեն եւ ամէն տեղ, միշտ  
փոխադարձ հսկողութեան առարկայ, այս տեսակէ-  
տով:

Հայ տղաք, որոնց մեծ մասը ներկայիս ցրուած  
է աշխարհիս չորս կողմը եւ կը լսէ աշխարհիս բոլոր  
լեզուները, պարտաւոր են մասնաւորապէս նախան-  
ձախնդիր ըլլալ չկորսնցնելու իրենց քաղցրահնչուն  
աննման մեծասքանչ լեզուն օտար երկնքի տակ, մա-  
քուր հայերէն խօսելով, մաքուր հայերէնով գրուած  
գիրքեր կարդալով:

Լեզուն ամէնէն նուիրական աւանդն է ազուն  
ձգուած՝ իր պապերուն կողմանէ. հայ տղան պար-  
տաւոր է գուրգուրանքով պահել պահպանել զայն:



Յ. ՍԿԱՌԻՏԸ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷՆԷՆ ԵՒ ԿԸ ՍԻՐԻԷ

Թռչունն ինչո՞ւ դուն կը բանտես,  
ծաղիկն ինչո՞ւ կը փետես\*  
Ուր որ կեանք կայ՝ հոն քեզ գըթոյ  
պարտք մը պէտք է որ գտնես :

Ռ . Յ . Պ .

Սկսուած կարելի եղածին չափ կը խնայէ անասուններուն տառապանքը\* անհարկի կերպով ոչ մէկ անասուն կ'ըստաննէ :

Անասունները մեր «ստորին եղբայր»ներն են\* անգթութիւն է անոնց վնաս հասցնել, զանոնք չարչարել\* «այն մարդը որ անգթօրէն կը վարուի անասուններուն հանդէպ՝ բարի չի կրնար ըլլալ» (Շօփէնհաուէր) : Ամէն անգամ որ անասուն մը չարչարելու զազափարը մտքիդ առջեւ ներկայանայ, պէտք է յիշել թէ անասուններ կան որոնք մարդը շիկնեցնելու ատիճան բարոյական (թողունք իմացականը) յատկութիւններ ցոյց կու տան\* կան անոնց մէջ այնպիսիներ՝ որոնք իրենց տիրոջը մահուընէն վերջ իրենց սրտի ցաւէն մեռած են :

Ծանօթացնել անասուններու պաշտպան ընկերութիւնները և կարգալ անասուններու բարեկամ գրազէտներու գրուածները :

9. ՍԿԱՌԻՏԸ ՈՒՐԱԽ ԵՒ ԽԱՆԴՍՎԱՌ Է

Ձախողանքդ միշտ գանգատո՞ղ, մի  
դու բախտին վերագրեր,  
Բախտը յաճախ մօտէդ անցեր, աչքերդ  
փակ՝ չես տեսեր :

Ռ . Յ . Պ .

Երբ իրեն հրաման մը արուի, սկսուած գուարթօրէն կը հնազանդի շուտով, և ոչ թէ խոտոտաղէմ և ակամայ :

Սկսուած մը կրեք չի տուտար՝ երբ բան մը ծանր գայ իրեն\* չի քեքեկր ընկերները և չի թշնամաներ՝ երբ անոնք ծեծած են զինքը\* կը սուլէ և կը ժպտի :

Երբ կառախուժը փախցընէ կամ երբ ոտքին կոշտին վրայ կոխեն — ինչ որ ըսել չէ թէ սկսուած պէտք է կոշտ ունենայ — կամ ուրիշ նեղացուցիչ պարագաներու մէջ, սկսուած պէտք է ինքզինքը բռնադատէ անմիջապէս ժպտելու, յետոյ եղանակ մը սուլելու\* ցաւը, նեղութիւնը կ'անցնի այս կերպով :

Անգլիացի սկսուածները, երբ իրենցմէ մէկը «բերանը աւրէ», զայն կը պատմեն հին սովորութեան մը համեմատ անոր թեւէն վար պաղ ջուր թափելով :

Երջանիկ ըլլալու զազանիքն է՝ հանդարտ խիզ ունենայ և բնութեան գեղեցկութիւնը վայելի : Ու բնութեան գեղեցկութիւնները վայելի սորվելու ամէնէն պարզ միջոցը բնական պատմութիւնն է :

Բնութեան սիրոյն հետ պէտք է գեղարուեստի (նկարչութիւն, բանաստեղծութիւն) սէրը մշակել սկսուածին մէջ :



10. ՄԿԱՌԻՏԸ ԱՇԽԱՏԱՍԷՐ ԵՒ ԿՈՐՈՎԻ Է

Յարատեող ճիգին առջև չկայ բան  
մ'որ դիմանայ,  
Իբժարը՝ դիւր, անկարելին հընարա-  
ւոր կը դառնայ:

Ռ. Յ. Պ.

Թող ամէն տղայ յիշէ թէ որքան տաղտկացած  
և դժգոհ եղած է այն պահուն ուր աշխատութիւն չէ  
ուսնեցած: Աշխատութիւնն է որ մարդը երջանիկ եւ  
ուրախ կ'ընէ: Աշխատութիւնն է նաև որ հեռու կը  
պահէ մոլութիւններէ ու չարութիւններէ:

Անկախաբար այն նիւթական տեսակետէն՝ ըստ  
որում մարդ պէտք է աշխատի իր օրապահիկը ճարե-  
լու և սպազան սպանովիլու համար, աշխատութիւ-  
նը, կը կրկնեմ, մարդուս երջանկութեան մեծագոյն  
ազդակն է, միակ փոփոխը՝ մեծ ցաւերուն:

Բայց նաև պէտք է կոկիկ ըլլալ ամէն բանի հա-  
մար տեղ մը որոշել և ամէն բան իր տեղը դնել:  
Մեթոտով աշխատիլ, կարգ կանոն դնել ոչ միայն իր  
գործերուն, այլ նաև իր մտածումներուն մէջ, շուայ  
չըլլալ եւ իր ծախքերը համեմատել գիտնալ իր չա-  
հածին հետ, վերջապէս կեանքի յատակադիմ մը ու-  
նենալ և ըստ այնմ ապրիլ, և ոչ թէ ըստ բաղդի,  
քմահաճոյքներու մղումներուն համեմատ:

Անհաւատալի բան է թէ որքան գործ կ'ար-  
տադրէ մարդ՝ երբ գիտնայ օգուտ քաղել այն պա-  
հերէն զորս յուժպէտս վատնելու թերութիւնը ու-  
նի:

Դարանը կամ սնտուկը շտկո: ամ պահել, զգեստ-  
ները կոկիկ կերպով իրենց տեղը դնել պառկելէ ա-  
ռաջ, օրական ծախքին հաշիւը բռնել կանոնաւոր  
կերպով, ճշտապահ ըլլալ, իր խոստումները ճշգրիտ  
կերպով յարգել գիտնալ, թանկագին առաւելութիւն-  
ներ են ասոնք տղուն համար, անհաշուելի բարիք-  
ներով զեղուն՝ անոր ապագայ կեանքին համար ևս:  
Թափթփածութիւնը ենթադրուածէն շատ աւելի ա-  
ղետարեր հետեանքներ կրնայ ունենալ: Բեստալոցցիի  
«Լէօնարտ ունտ կերդրուտ»ը կարդա և պիտի համոզ-  
ւիս այս ճամարտութեան:

11. ՄԿԱՌԻՏԸ ՏՆՏԵՍՈՂ Է

Ծախսէ՛, խնայէ՛, այսօրն ու վաղ  
դու դոհացո՛ւր երկուքն ալ,  
Ո՛չ բնաւ ագահ, ոչ ալ շոտյլ, տըն-  
տեսող լաւ է ըլլալ:

Ռ. Յ. Պ.

Նկարագրի տէր ըլլալ՝ կը նշանակէ իր ջիւղերուն իր  
կիրքերուն տէրն ըլլալ և տնտեսող ըլլալ՝ կը նշանակէ  
լուեցնել իր մէջը այն հազարումէկ թելադրութիւննե-  
րը որոնք կը մղեն մարդը ընդունայն վատնելու  
դրամը: Սկառուար ինքը, ճիգի մարդ, ոչ միայն ընդու-  
նայն չի վատնէր դրամը, այլ առանց դրամի օգնու-  
թեան կը ձգնի դուրս ելլել այն դժուարութիւննե-  
րէն՝ որոնց ուրիշները պիտի յաղթէին դրամով:



Սկսուածը դրամ կ'աւելցնէ և կը դնէ զայն  
խնայողութեան սնտուկը ուր դրամը կ'աճի ամէն օր :  
Բայց խնայողութիւնը կրնայ շուտով դառածա-  
նիլ կծծիութեան . զգուշութիւն :

12. ՍԿՍՈՒՏԸ ՄՕՒՌՈՒՐ Է ՄՏԱԾՈՒՄՈՎ ,

ԽՕՄՔՈՎ ԵՒ ԳՈՐԾՔՈՎ .

Մաքրատէր մարդն հոգածու է մաք-  
րութեանն ալ իր հոգւոյն ,  
Մարմնով , շորով ազտա մարդուն  
սիրտն ալ ազաից յաճախ բոյն :  
Թ \* Յ \* Պ \*

Մարմնոյ մաքրութիւնը առողջութեան կարևոր  
պայմաններէն մէկն է :

Մարմնոյ մաքրութիւնը կենցաղագիտական  
տարրական պահանջներէն մէկն է նաև :

Մարմնոյ մաքրութիւնը կարևոր է ուրիշները  
պժգանքով իրմէ չհեռացնելու համար :

Վերջապէս մարմնոյ մաքրութիւնը պատճառ կամ  
արդիւնք է յաճախ հոգեկան մաքրութեան : Բոյր  
այս նկատումներով , սկսուածը պարտաւոր է մարմնոյն  
մաքրութեան հոգածու ըլլալ :

Սկսուածը յարգ չընծայիր անոնց՝ որոնք ազտա  
խօսքեր դուրս կը հանեն իրենց բերնէն և ինքը ազ-  
տառ բան չ'ըսեր , չի խորհիր ու չ'ընէր .

Սկսուածին միտքը մաքուր է և սիրտը արի :

1925 Հոկտ .

Յ , Թ \* ՀԻՆԴԼԵԱՆ

**ՀԵՏԱԽՈՒՂԱԿԱՆ ՆՂԱՆՆԵՐ**

Հետախուղական նշանները կը դրուին ճամ-  
բաներուն աջ եզերքներուն վրայ :

Պէտք է այնպէս սը դուրս որ հետևորդ սկա-  
ուտները կարենան զանոնք դիւրաւ տեսնել ու  
հասկնալ : Օրինակի համար գիշեր ատեն փոխանակ  
հողին վրայ գիծեր քաշելու իրր նշան՝ պէտք է զայն  
ներկայացնել տեսանելի գոյնով և և հողին վրայ ցցուած  
առարկաներով (քար , եւայլն) :

Նշանները պէտք է այնպէս մը դնել որ ոչ—սկա-  
ուտներու ուշադրութիւնը չհրաւիրեն :

Հետախուղական գլխաւոր նշանները հետեւալ-  
ներն են .

1. ՈՒՂՂՈՒԹԻՒՆ մը այսինքն հետեւելիք ճամ-  
բան ցոյց տալու համար կը դրուի սւաք մը :

2. ՊԱՀՈՒԱԾ ՆԱՄԱԿ մը ցոյց տալու համար  
ուղղանկիւն քառանկիւնի մը նեղ կողմին վրայ կ'ա-  
ւելցուի սւաք մը : Սւաքը ցոյց կուտայ թէ Յ քայլ  
հեռուն նամակ մը պահուած կամ թաղուած է : Եթէ  
ուզենք ևրեք քայլէ աւելի հեռուն պահուած նա-  
մակ մը ցոյց տալ՝ քառանկիւնին մէջ կը դնենք նշա-  
նին և պահուած տեղին միջեւ եղած քայլերուն թիւը :

Նամակները պէտք է այնպէս մը պահել որ ու-  
րիշէն չնշմարտին , ինչպէս ծառի՝ կոճղերու , ծակ ոս-  
կորներու , կտորած շիշերու , պատի խոռոչներու մէջ ,  
քարերու տակ , եւայլն :



3. ԱՆԵՆԼ ԿՍՄ ԱՆԱՆՑԱՆԵԼԻ ՃՍՄԲՍՑ ցոյց տալու համար զիրար խաչաձևող երկու զիծեր կը դրուին:

4. ՎԵՐԱԴԱՐՁ ցոյց տալու համար կը դրուի շրջանակ մը մէջտեղը կէտով մը:

5. ՄԱՔՈՒՐ ՁՈՒՐ ցոյց տալու համար ջուրին քովը կը դրուի շրջանակ մը՝ մէջը երեք ալիքաձև գիծով:

6. ՀԵՌԱՒՈՐ ՁՈՒՐ մը ցոյց տալու համար շրջանակին աջ կողմը դէպի վեր կը դրուի սլաքը:

7. ՄՕՏԱԿԱՑ ՁՈՒՐ մը ցոյց տալու համար սլաքը կը դրուի շրջանակին աջ կողմը դէպի վար:


Նշանները դնող սկաուտը պէտք է ստորագրէ տակը դնելով իր խմբակը ներկայացնող կենդանիին պատկերը, աջ կողմը իր պատկանած խումբին թիւը լատինական թուանշանով, և ձախ կողմն ալ սովորական թուանշանով իր խմբակին մէջի իր սեփական թիւը:



Վերադարձ



Մաքուր ջուր



Չեղուն ջուրիկայ



Մտաղ ջուրիկայ



Ուղղութիւն



Նամակ կայ պահուած



Անը ճամբայ



ՀԵՏԱԿՈՒՉԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



### Հ Ա Ն Գ Ո Յ Ց Ն Ե Ր Ը

Գլխաւոր հանգոյցները հետեւեալներն են.—

**ԱՆՈՒՈՐԴ ԿԱՊ (noeud de cabestan).**— Ընդհանրապէս նաւազներ կը գործածեն այս կապը՝ պարանը անուորդին վրայ անցընելով եւ անուորդը շարժման մէջ դնելով նաւը դէպի հաստատ կայան մը մօտեցնելու համար: Սկառուտները այս կապը կը գործածեն երբ պարանի մը ծայրը ամփոփոխ ծաւալով օղակ մը ձեւացնելու պէտքը զգան՝ օղակի մը կամ կեռի մը անցընելու համար:


**ՕՂԱԿ ԿԱՊ (noeud droit).**— Երկու հաւասար հաստութեամբ պարաններ իրարու հետ հաստատապէս կապելու համար կը գործածուի այս կապը:

**ՋՈՒԼՀԱՆ ԿԱՊ (noeud de tisserand).**— Երկու անհաւասար հաստութեամբ պարաններ իրարու կապելու համար կը գործածուի այս կապը:

**ԳԵՐԱՆ ԿԱՊ (noeud de batelier).**— Նաւատինները յաճախ կը գործածեն այս կապը՝ նաւը կայանի մը մօտ կեցնելու համար: Սկառուտները այս կապին պէտք կ'ունենան պարան մը պրկուած վիճակի մէջ ծառի մը կամ գերանի մը շուրջ հաստատելու համար:

**ՁԿՆՈՐՄ ԿԱՊ (noeud de pêcheur).**— Ձկնորսները կը գործածեն այս կապը՝ իրենց կարթերը պատրաստելու ատեն:

**ԱՄՓՈՓ ԿԱՊ (noeud à raccourcir).**— Այս կապը կը գործածեն երկար պարան մը առանց կորելու կարճեցնելու համար: Մասնաւորապէս վրաններու կազմութեան ատեն երկար չուանները ամփոփ պահելու համար կը գործածուի:



### Հ Ա Ն Գ Ո Յ Ց Ն Ե Ր



# Ս Կ Ա Ո Ւ Տ Ի Ն Բ Ա Ր Ե Ի Ր

Սկառուտի բարեւը խորհրդանշանն է անոր երգումին:

Սկառուտը կը բարեւէ աջ ձեռքին ափը դէպի դուրս զարձած մէջտեղի երեք մասները բարձր վեր, որոնց առջև կը ծալլէ ըթամատին ծայրը ձկոյթին վրայ ծածկելով:

Բարձրացած երեք մասները, — ցուցամատը միջնամատը եւ մատնեմատը, — կը յիշեցնեն սկառուտի երգումին երեք հատուածները՝ (Ա. հաւատարմութիւն Աստուծոյ եւ հայրենիքին, Բ. օգնութիւն նմանին, Գ. հնազանդութիւն սկառուտի դաւանանքին):

Ծալլուած ձկոյթը կը խորհրդանշէ սկառուտին հնազանդութիւնը իր պետին. իսկ ըթամատը՝ որ անոր վրայ ծալլուած է՝ պետի մը պաշտպանութիւնը ընծայուած փոքրին:


Սկառուտը իր ընկերները կը բարեւէ կէս բարեով այսինքն ափը վերեւ բացատրուած դիրքով՝ ձեռքը ուսին ուղղութեանը բարձրացնելով եւ նոյն ձևով կը փոխադարձուի:

Սկառուտը իր պետերը կամ սպայ մը, — ինչպէս նաև ազգային դրօշը ազգային քայլերդը եւ յուզարկաւորութիւն մը, — կը բարեւէ ամբողջական բարեւով, այսինքն ձեռքը նոյն դիրքին մէջ բարձրացնելով մինչէւ ձակատը, որուն անոնք կը պատասխանեն նոյն ձևով կամ ազատ բարեւով:


ԼԻՓԻՆ ԶԵԿԸ



ԿԵՍ ԲԱՐԵՒ



ԱՍՐՈՂՁ ԲԱՐԵՒ



ԲԱՐԵՒԻ ԶԵԿԵՐ



### ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորընծայ մը պարտաւոր է ունենալ հետեւեալ նախնական ծանօթութիւնները։—

#### ՆՇԱՆԱԲԱՆ

Հայ սկսողներն նշանարանն է՝

«ԲԱՐՁՐԱՅԻՐ, ԲԱՐՁՐԱՑՈՒՐ»

Այս նշանարանը ցոյց կու տայ թէ ամէն հայ սկսող պարտաւոր է հոգիով, մտքով եւ մարմնով տիպար անհատ մը դառնալ, ի գործ դնել իր դաւանանքին բոլոր կէտերը, այսինքն նախ ինքը բարձր անալ եւ յետոյ հոգ տանիլ որ ուրիշներ ալ դառնան այդ տիպար անհատը, այսինքն բարձրացնել ուրիշը։

#### ՆՇԱՆԱԿ

Նշանակը կը կրեն սկսողները իրենց գլխարկին վրայ։



Նշանալը մեռալէ է եւ կը ներկայացնէ Մասիսը շուրջը սկսողական նշանարանը գրուած։

Մասիսը խորհրդանշանն է հայ ցեղին, անոր հայրենիքին, անոր դարաւոր պայքարներուն եւ ճիգերուն, ու անոր անսպասան հաւատքին։

### ՀԱՄԱԶԳԵՍՏ

Սկսողտի մը համազգեստը կը կազմեն

1. Գլխարկը
2. Շապիկը
3. Տափատը
4. Գուլպան
5. Վիզի թաշկինակը
6. Կօշիկը
7. Կաշիէ գօտին
8. Ուսի երիզը
9. Գաւազանը
10. Պայուսակը

#### ԳՒՒՍԱԶԱՆԸ

Սկսողական դաւազանը հարիւր վաթսուց սանթիմէթր երկայնութեամբ եւ երեք սանթիմէթր տրամագիծով փայտ մըն է՝ ամբողջ երկայնքին ութի բաժնուած եւ իւրաքանչիւր բաժին քսան սանթիմէթր։ Վերի զազաթէն հինգ սանթիմէթր վար ծակ մը ունի։ Վերէն հաշուելով երկրորդ բաժինը աստիճանաւորուած է տեսիմէթրով, կէս տեսիմէթրով եւ սանթիմէթրով։

Ամէն սկսող պարտաւոր է իր անուան սկզբնատառը այրելով փորագրել գաւազանի ծակին երկու կողմը։

#### ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

Սկսողական աստիճաններն են

1. Նորընծայ
2. Երկրորդ կարգի սկսող



- 3. Առաջին կարգի սկաուտ
- 4. Վկայեալ սկաուտ
- 5. Արարատեան սկաուտ

ՇԱՐՔԵՐ

Սկաուտական շարքերը կը կազմեն

- 1. Սկաուտ
- 2. Խմբակ
- 3. Խումբ

ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՄ ՊԱՇՏՕՆՆԵՐ

Սկաուտական վարձատրութիւններն են. —

- 1. Փոխ առաջնորդ
- 2. Առաջնորդ
- 3. Վարիչ առաջնորդ
- 4. Փոխ—խմբապետ
- 5. Խմբապետ

Հ. Մ. Ը. Մ. Ը

Հ. Մ. Ը. Մ. Ը կրճատումն է «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն» բառերուն :

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հիմնուած է 1918 նոյեմբերին Կ. Պոլսոյ մէջ :

Հ. Մ. Ը. Մ. Ս. ի նպատակն է հասցնել մարմնով և հոգիով առողջ ու զօրաւոր սերունդ մը :

Հ. Մ. Ը. Մ. Ը կը բաղկանայ սկաուտական և մարզական կազմակերպութիւններէ :

Հ. Մ. Ը. Մ. Ս. ին մէջ կան նաև համակիր, պատուոյ և բարերար անդամներ՝ որոնք նիւթապէս կամ բարոյապէս կ'աջակցին Հ. Մ. Ը. Մ. Ս. ի ձեռնարկներուն :

Հ. Մ. Ը. Մ. Ս. ի սկաուտական կազմակերպութիւնը կը բաղկանայ զայլիկներէ, սկաուտներէ և Երէջ սկաուտներէ :

Հ. Մ. Ը. Մ. Ս. ի մասնաձիւղերը կը բաղկանան առնուազն քսան անդամէ :

Ամէն մասնաձիւղ կ'ունենայ իր Մասնաձիւղաձիւղային Վարչութիւնը :

Երկրի մը մէջ գտնուող բոլոր մասնաձիւղերը կը կազմեն շրջան մը՝ որ կ'ունենայ իր Ծրջանային Վարչութիւնը :

Հ. Մ. Ը. Մ. Ս. ի ամէնէն բարձր մարմինը կը կոչուի Կեդր. Վարչութիւն՝ որ գլուխն է բոլոր Ծրջանային Վարչութեանց :





# Ս Կ Ա Ո Ւ Տ Ի Ն Ե Ր Գ Ո Ւ Մ Ը

Սկառուտին երգումը հետևեալն է,—

«Պատուոյս վրայ կ'երգնում»

Ըլլալ հաւատարիմ Աստուծոյս եւ ծառայել  
Հայրենիքիս

Միշտ օգնել ուրիշին, և գործել իբր պարտա-  
կանութեանս գիտակից արի եւ վեհանձն մարդ  
Հնազանդիլ հայ սկառուտի դաւանանքին:»



# Խ Մ Բ Ա Կ Ի Ն Ն Զ Ա Ն Ը

(Սկառուտ վարիչներուն համար)

Առաջնորդ մը՝ թեկնածուն հրահանգած ատեն՝  
պէտք է անոր սորվեցնէ նաև իր խմբակին անունը,  
նկարը այն կենդանիին որուն անունը կը կրէ խմբա-  
կը, և այդ կենդանիին ձայնը: Այս ծանօթութիւնները  
թէեւ չեն պահանջուիր թեկնածուի մը քննութեան  
ատեն՝ բայց անոր անհրաժեշտ են պատրաստութեանը  
համար:

Ամէն խմբակ կը կրէ կենդանիի մը անունը,  
ինչպէս շուն խմբակ, աքլոր խմբակ, այծ խմբակ,  
էշ խմբակ, կով խմբակ, կատու խմբակ, ձի խմբակ,  
գայլ խմբակ, աղուէս խմբակ, եւ այլն:

Ամէն խմբակ իր դրօշին վրայ կ'ունենայ զինք  
զանազանող կենդանիին գլխուն կամ ամբողջ մարմնոյն  
պատկերը: Ամէն սկառուտ պէտք է կարենայ նմանցնել  
ձայնը այն կենդանիին՝ որուն անունը կը կրէ իր  
խմբակը:

Այս ձայնով է որ սկառուտները զիրար կը գտնեն  
գիշերը, կամ երբ պահուըտած են:

Շունի մը հաչիւնը նմանցնող բացառանչու-  
թիւնն է «պաո՛ւ—ուաո՛ւ», կատուի մը մլաւիւնը  
«միաո՛ւ», ձիի մը վրնջիւնը «հի՛-հի՛-հի՛-հի՛», գայլին  
ոռնոցը «հաո՛ւ-ոո՛ւ», այծին մայիւնը «մէ՛-է՛», է-  
շին զոոցը «ի՛-ա՛-ի՛-ա՛», կովուն բառաչիւնը «է՛մ-  
մաո՛ւ», աքլորին կանչը «կու-կու-լի՛կ-կո՛ւ» եւլն:



### ՆՈՐԸՆԺԱՅԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

(Ծանօթութիւն սկառու վարիչներուն համար)

Թեկնածու մը առնուազն երկու ամիս պէտք է հրահանգուի խմբակի մը առաջնորդին կողմէ :

Երբ արդէն սորված և մարսած է նորընծայէ մը պահանջուած բոլոր ծանօթութիւնները՝ առաջնորդը զինքը կը ներկայացնէ քննութեան :

Նորընծայի քննութիւնը տեղի կ'ունենայ խումբապետին, փոխ—խմբապետին, եւ խումբին մէջ գտնուող վարիչ առաջնորդներուն ու առաջնորդներուն ներկայութեան :

Նորընծան ոչ միայն պէտք է գոց գիտնայ սկառուտին դաւանանքն ու երդումը, կարենալ տալ սկառուտին բարեք, ճանչնալ հետախուզական նշանները, կապել հանգոյցները, և գիտնայ անհրաժեշտ նախնական ծանօթութիւնները, այլ մտնաւանդ կարենայ բացատրել դաւանանքին տասներկու կէտերը եւ երդումին երեք մասերը, այսինքն կարենայ ըմբռնել արժէքը այն յանձնառութիւններուն որոնց կ'ենթարկուի իր հանդիսաւոր երդումէն յետոյ, պարտականութիւնները որոնք այնուհետեւ իրը պիտի ըլլան, եւ պատասխանատուութիւնը՝ որուն ինքզինքը կ'ենթարկէ կամաւ :

Քննութեանց մէջ յաջողած նկատուելու համար որեւէ թեկնածու պէտք է քննելի բոլոր ճիւղերուն մէջ ալ բաւարար ծանօթութիւններ ունենայ :

### ՆՈՐԸՆԺԱՅԻ ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

(Ծանօթութիւն սկառու վարիչներուն համար)

Իր քննութեանց մէջ յաջողած թեկնածուի մը ընդունելութիւնը տեղի կ'ունենայ հետեւեւ կերպով .—

Խումբը կը շարուի պայտած և, խմբապետն ու փոխ—խմբապետը նստած կեդրոնը :

Թեկնածուն իր խմբակի առաջնորդին հետ, կը կենայ կազմուած շրջանակին մէջ՝ խմբապետին դարձած : Փոխ խմբապետը կը բռնէ թեկնածուին գաւազանն ու զլխարկը :

Խմբապետը կը հարցնէ. «Գիտե՞ս թէ ի՞նչ է պատիւը» :

Թեկնածուն կը պատասխանէ. «Այո՛, ան կը նշանակէ թէ կարելի է վստահիլ ուղղամտութեանս ու պարկեշտութեանս վրայ» :

Խմբապետը կը հարցնէ. «Կրնա՞մ վստահիլ պատուոյդ թէ հաւատարիմ պիտի ըլլա՞մ Աստուծոյդ եւ հայրենիքիդ, միշտ պիտի օգնես ուրիշին՝ եւ պիտի գործես իբր պարտականութեանը գիտակից արի եւ վեհանձն մարդ, ու պիտի հնազանդիս հայ սկառուտի դաւանանքին» :

Թեկնածուն այն ատեն կէս—բարե մը կու տայ, եւ իրեն հետ ամբողջ խումբը : Յետոյ թեկնածուն կը պատասխանէ .

«Պատուոյս վրայ կ'երդնում ըլլալ հաւատարիմ Աստուծոյս եւ ծառայել հայրենիքիս, միշտ օգնել ուրիշին եւ գործել իբր պարտականութեանս գիտակից



արի և վեհանձն մտրղահնազպնդիլ հայ սկառնի դա-  
ւանանքին» :

Խմբապետը կ'ըսէ . «կը վստահիմ պատուոյդ վրայ  
թէ պիտի պահես երդումդ : Հիմա այլևս մաս կը  
կազմես սկառնաներու մեծ եղբայրութեան» :

Փոխ — Խմբապետը անոր կու տայ այն ստեն իր  
գաւազանը ու գլխարկը կը դնէ գլուխը :

Խմբապետը կը սեղմէ անոր ձեռքը :

Նորընծան կը դառնայ խումբին եւ կը բարևէ  
զայն : Խումբը գաւազանով կը բարևէ նորընծան :

Խմբապետը կը հրամայէ . «Դէպի խմբակդ , օ՛ն» :

Խումբը ուս կ'առնէ գաւազանները եւ նորըն-  
ծան ու առաջնորդը կը միանան իրենց խմբակին :





2013

« Ազգային գրադարան



NL0036778

3308



